



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1498

22
5-25

872

y-5 w68

3716

2010

220 471 սրբազն 471

589-ՄՎՊԱՏՄՈՒԹԻՒՆ

22

Մ-2521ՆԵՒ ՆՈՐ ՈՒԽՏԻ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԹԵՍԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

1904
1905
1906
1907
1908

Օքտոբեր 2 օքտոբեր 1908 հայրական երեխանութեան
համար:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Ս.Պ. ՇՈԼՈՎԻ ԲԱՅԼԻ ՎԻՃԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/ХI. 1922
*Ա. Ա. ԱԶԱԽԱՆՅԱՆ Ա. Ա. ԱԶԱԽԱՆՅԱՆ
Ա. Ա. ԱԶԱԽԱՆՅԱՆ Ա. Ա. ԱԶԱԽԱՆՅԱՆ

12012 0-348-1872



Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԵՂ ՈՒԽՏԻ ԵԿԵՊԵՑԻՈՅ

ՀՐԱՄԱՆԸ

Տ. Տ. ԳԵՂՈՐԳԵԱՅ Դ.

ՎԵհ. ԵՒ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂՆՄՈՒՅԻՑ ՄԻՆՉԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ
ԾՆՈՒՆԴԸ ԱՄՔ 3499:

§ 1. Եշիազի առեղքադուրծութիւնը:

Ես քրիստոնեայ եմ և պաշտում եմ
Ճմարիտ Աստուածը, ինչպէս իմ Երարիչ.
Նա ստեղծեց երկինքը ու երկիրը ոչնչեց
մէկ և ամենազօր խօսքով, և տուաւ շե-
նութիւն վեց օրումը:

Առաջին օրը ստեղծեց լոյսը, և սկսաւ
գիշերն ու ցերեկը:

Երկրորդ օրը շինեց հաստատութիւնը
կամ ջրային կամարը, և կոչեց երկինք:

Տ Պ Տ Օ Տ

Երբորդ օրը բաժանեց ջուրը յամաքից,
և զետնի երեսը ծածկուեցաւ զանազան
պտղատու և անպտուղ ծառերով, բան-
ջարեղէնով, ծաղիներով և խոտով. իսկ
ջրերից կազմուեցան ծովեր, լճեր, գետեր
և աղբիւրներ:

Չորրորդ օրը ստեղծեց արեգակը, լու-
սինը և աստղերը:

Ամենգերորդ օրը Աստուած լցրեց ջրերը
ձկներով և օղը թռչուններով:

Երեսերորդ օրը ստեղծեց յամաքային
կենդանիքը, և ամենքից յետոյ մարդը:

Ես շատ լւա. եմ հասկանում, որ Աս-
տուած ոչինչ բանի կարօտ չէ, և այն վեց
օրուայ մեջ ինչ որ ստեղծեց՝ բոլորն մեզ
համար է, որ Ճանաչենք նորանցմով Աս-
տուածոյ մեծութիւնը, փառքը և բարերա-
րութիւնը, պաշտենք և երկիրսպագանենք
նրան, փառաւորենք զնա: Ես ամենայն օր
ամենայն գործ սկսելիս երեսս խաչակնքում
եմ, ինդրում եմ որ ինձ շնորհք տայ, և

իմ ամենայն բարի գործերուն օդնական
լինի, և միշտ խոնարհ շնորհակալութիւնս
մատուցանում եմ ասելով՝ Փառք Քեղ
Աստուած, փառք Քեղ՝ Քո ինձ ողոր-
մութեան համար:

§ 2, Մարդու սույնութեալը:

Որովհեաև վեց օրուայ մեջ ստեղծուած-
ները անշունչ և անբան էին, և նոքա չեին
կարող ճանաչել ոչ Աստուած և ոչ նո-
րա փառքը, ուստի ստեղծում է բանա-
կան արարած — մարդ: Առնում է աստ-
ուածային ձեռով հող, և շինում է մար-
դու մարմինը, և տալիս է նրան բանական
հոգի, աղատ և անմահ: Մարդն ստեղծ-
վում է աստուածային պատկերի և նմա-
նութեան: Աստուածային պատկերը այն
է, որ Աստուած կարգում է զնա իւր փո-
խանակ տէր և իշխան բոլոր արարածնե-
րու վերայ, իսկ նմանութիւնը՝ էր մարդու

կեանքի սրբութիւնը, արդարութիւնը և
անմեղութիւնը:

Եթէ որ ուզում ենք, որ աստուածա-
յին պատկերը ու նմանութիւնը ունենալ
պիտի աշխատենք սուրբ և մաքուր պահել
մեր անձը, և մեր կամքը չկատարել, այլ
Աստուծոյ կամքը:

Առաջին մարդու անունն էր Ադամ:
Կա մէսակ էր. Աստուած նորա վերայ մէկ
խորը քուն ձգեց, և քնած ժամանակ ա-
ռաւ նորա կողքի ոսկորներից մէկը, և այն
ոսկորից ստեղծեց կին, անունը դրաւ
Եւայ, ու տուաւ Ադամին օգնական, և
օրհնեց, որ աճին ու բազմանան երկրի
վերայ:

§ 3. Առաջին եկեղեցին դրախուած, և նա-
խառաջնորդներու եցջանին վիճակը:

Աստուած տալիս է Ադամին ու Եւային
անակութեան տեղ, մէկ զուարձալի պար-

տեղ, զոր ինքը տնկել էր, և կոչում է
Դրախո, որ գտանւում էր այն տեղ, ուր
Տիգրիս և Եփրատ գետերը բղնում են:
Ոքա են այսատանում Երզումի (Կար-
նոյ) մօտ: Այն տեղ հաստատում է առաջին
Եկեղեցին, ոքք անդամներն էին երկու հոգի
— այր և կին: «Եոցա կերակուրն էր դրախ-
ատի ծառերի պտուղները. բայց երկու գլխա-
ւոր ծառեր կային, մէկի անունն էր կենաց
ծառ, որի պտուղը ուտելով պիտի մնային
անմահ, և միւսն էր նոցա հնազանդութիւ-
նը և սէրը առ Աստուած փորձելու համար,
որի անունն էր ծառ Քիառենալու բարին ո-
ւարը: Աստուած զգուշացրեց որ այս ծառի
պտուղը չուտեն, եթէ որ կուտեն, կը մեռ-
նին:

Ադամ ու Եւայ իրանց կեանքի առա-
ջին օրերը անցուցանում էին շատ երջա-
նիկ, քանի որ հնազանդ էին Աստուծոյ
հրամանին, նոքա խօսում էին Աստուծոյ
և հրեշտակներու հետ. ոչինչ բանի հա-

մար հողս չունեին. ղըախտի մէջ աշխատանք էր զուարձութիւն, կերակուրը պատրաստ, որ չքաղցին, ըմպելին՝ որ չ'ծարաւին. անմեղութիւնն էր նոցա հագուստը, օդը պարզ և մաքուր՝ ոչինչ չէր վնասում նրանց. կենաց ծառի պտուղը պահում էր զնոսա առոյգ և երիտասարդական հասակի մէջ, և դազաններից ոչինչ երկիւղ չունեին. բայց երբ Աստուծոյ հրամանը կոտրեցին, այս ամենայն լաւութիւններից զրկուեցան:

§ 4. Աախտասարդնեղնեցնեցու պարունական ցունենալուն:

Աախտաստեղները չհասկացան, թէ այն երջանկութիւնը, զոր նոքա ունեին, աշխարհի վերայ չուներ ոչ մի արարած. չըմտածեցին թէ Աստուծած աւելի լաւ դիտեր նոցա օգուտը և վնասը, որ տուել էր այն պատուիրանը. նոքա հետեւցան ի-

րանց կամքին, և աւելի լսեցին օձակերպ թշնամուն խօսքին, քան թէ Աստուծոյ հրամանին. թեթևամիտ կինը կարծեց օձի խօսքով Աստուծած դառնալ, եթէ ուտէ արգելեալ պտուղը. կերաւ, և տեսաւ զինքըն խայտառակ: Աղամ նոյնպէս կերաւ խարուելով կնոջ սերից, ու ոտի տակ տըւին Աստուծոյ հրամանը, և քանդուեցաւ Եկեղեցին դրախտումը:

Եոքա շուտ զգում են Երիշող և աճեն: Երիշող՝ որ թագկացան ծառերու տակը, և ամօթ՝ որ մերկութիւնը ծածկեցին թըղինու տերեններով:

§ 5. Պատրիժը և Քոն-Երիշող:

Աստուծած երեկոյեան ժամանակ պատուիրանազնցութեան օրը, գալիս է դրախտը, և քաղցրութեամբ կանչում է, Աղամ, ուր ես: Աղամ փոխանակ խօստովանելու իւր մեղքը, աշխատում է ար-

դարանալ, ձգելով պատճառը կնոջ վերայ, և կի՞նը՝ օձի վերայ. և այսպիսի անապաշխար կամքի համար պատժուեցան մահով, հող էիր և է հող բարենասա: Աշխատանքն, որ դրախտում էր ուրախութիւն, դարձաւ ոգեմաշքը բարինք, որդեմնութեան օրհնութիւնն եղաւ Խւայի համար աղբիւր ցաւերի և մահուան, հիւանդութիւն և աղքատութիւն տիրեցին նոցա, երկիրը անիծուեցաւ իւր ծնունդներով. անբան կենդանիքը կորցրին դէպի մարդը առաջին հնազանդութիւնը և եղան թըշնամիք: Օձը անիծուեցաւ փորի սող գնալ և հող ուտել:

Աստուած այնպիսի արդար դատաստանով վճռելու մէջ ցուցանում է Իւր գութը և սէրը դէպի մարդը, նորա ընկած երջանիկ վիճակը կրկին վերականդնելու, խոստանումէ առաքել Փրկիչ, մարդկային դատապարտեալ բնութիւնը աղատելու, երբ օձին անիծելու ժամանակ, ասում է,

որ կնոջ զաւակը կը ջաղջախէ օձի գլուխը: Եյս Զաւակն էր Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս, որ ժամանակը լրանաւուց յետոյ՝ պիտի մարմին առնու, և ազատէ Ազամայ ծնունդը:

Ազամի ու Խւայի պատուիրանազանցութիւնը մեզ ուսուցանում է, որ մեղքի մէջ չ'պէտք է անզեղջ մնալ, և ոչ ուրիշ վերայ դնել պատճառը, այլ շուտով մեղայ ասել Աստուծուն, և ստանալ թողութիւն, և պատժից մնալ ազատ:

§ 6, Կայէն և Եբէլ:

Կախաստեղներին արտաքսուելով դըրախտից բնակւում են նորա հանդէպ, և պատուիրանազանցութեան թշուառութիւնքը շուտով երկեռմ են նոցա տան մէջ: Ազամ ծնաւ երկու որդի Կայէն և Եբէլ, առաջինն էր երկրագործ և երկրորդը հովիւ ոչխարներու: Կոքա երկուքը

զանազան էին բնութեամբ, և բերին Աստուծուն զոհ, Կայէն երկրի բերքերից, և Արելլ ոչխար, բայց զանազանութիւնը չէր բերած զոհերի մէջ, այլ սրաերի ջերմեռանդութեան մէջ։ Կայէնի մատուցած զոհը էր անսիրտ, և Աստուած չընկալաւ, իսկ Արելինը էր հաւատով և ուղեղ սրբտով և Աստուած ընկալաւ. այս պատճառաւ բարկացաւ Կայէն և սպանեց եղեայրը դաշտում, և եղաւ առաջին օրինակ մարդասպանութեան. վասն որոյ անիծեց Աստուած Կայէնին, և նա շրջումէր երերեալ և տատանեալ. խղճմտանքը չէր թողում զնա հանգիստ, և փախաւ ծնողներից ու բնակեցաւ պանդստութեան մէջ։ “Նորա որդիքը և թոռները զնացին Կայէնի չար ճանապարհաւ, և էին մոլիք և չարագործներ, բաժանուեցան ճշմարիտ եկեղեցուց ու մոռացան Աստուածը և փրկութեան խոստումը։

Տէր Աստուած տուր ինձ զօրութիւն յալթելմարմնական կրքերիս, սուրբ պահեա լեզուս և ձեռներս արիւն թափելուց, ընդունիր իմ աղօթքս ինչպէս Արելի պատարազը։

§ 7, Եշեւելի նահապէտներ զբհեղեղնեց աւագն։

Ադամ, որ շատ տրտմած էր Արելի մահուան վերայ, Աստուած միսիթարում է զնա տալով որդի Աթէ անուն։ Արամէն ծնուեցան բարեպաշտ որդիք, Ենովս, Կայնան, Մազաղել, Յարեղ, Ենովք, Մաթուսաղայ, Պամեք և Կոյ։ Սոքակին ճշմարիտ Աստուածպաշտութեան պաշտպաններ, Առւրբ Գյիրքը կոչումէ Ուրդիւ Աստուածոյ։ Սոքա անուաննւումէն “Եպհապէտներ”, որոց մէջ երեւելի գանուեցաւ Ենովք, որ կեանքի սրբութեան համար կենդանի վերացաւ երկինքը։ “Կոյի ժամանակ միանդամայն չարութիւնը տիրել էր

աշխարհի վերայ այնպէս՝ որ բաց ի ՚Եղի
տանից չկար Աստուածապաշտ և առաքի-
նի մարդ: Աէթայ զաւակները ևս ամուս-
նանալով կայենի զաւակներու հետ, նո-
ցա ապականեալ վարք ու բարքին հետե-
ւեցան, և այսպէս ապականուեցաւ ամե-
նայն երկիր, և չարութիւնը այն աստիճան
բարձրացաւ, որ ընդհանրական ջրհեղեղը
լուաց և սրբեց երկրի երեսը:

§ 8. Շնորհանքական ջրհեղեղ:

Աստուած տեսնելով մարդկանց ապա-
կանութիւնը և անդղջութիւնը, կամեցմւ
ջնջել գնոսս երկրի երեսից, և միայն պա-
հել զնոյ իւր ընտանիքով մարդկային
ազգի բազմանալու համար. վասն որոյ
հրամայում է ՚Եղին շինել Տապան, որի
մէջ պիտի մտնէր նա իւր ընտանիքով:
Երբ որ ՚Եղ մտաւ Տապանի մէջ, առաւ
իւր հետ և ամենատեսակ կենդանիներից,

սուրբերից եօթն եօթն, և անսուրբերից
երկու երկու արու և էզ: Յետոյ եկաւ սաս-
տիկ անձրե քառասուն օր և զիշեր, ջու-
րը բարձրացաւ ամենաբարձր սարերից այն-
պէս, որ այլ ևս աղատուելու հնար չկար,
և ամենայն կենդանիթէ մարդ, թէ անա-
սուն և թէ թռչուն խեղդուեցան, միայն
ապրեցան նոքա՝ որք Տապանի մէջ էին:
Գլհեղեղը քաշեց մէկ տարի. և ապա Տա-
պանը նստեցաւ Ամասիս սարի գլխին, և ջու-
րը օրէ ցօր նուազում էր, և վերկացաւ
սաստիկ քամի, ու ցամաքացրեց աշխարհը:
Աստուածոյ հրամանով ՚Եղ դուրս եկաւ
Տապանից իւր հետ եղածներով. և զոհ
մատոյց Աստուածոյն իւր և կենդանեաց
ազատութեան շնորհակալութեան նշան:
Այս զոհը հաջոյ եղաւ Աստուածոյ, որ
խոստացաւ միւսանդամ չածել այնպիսի
ջրհեղեղ:

Այս պատմութիւնը մեզ ուսուցանում
է, որ Աստուած իւր երկայնամտութեամբ

չ շուտով կատարում իւր արդարադատութիւնը, այլ սպասում է մեղաւորներու դարձին. բայց երբ որ նոքա գտանեւում են անզգայ և իրան կամքի ուղածն են կատարում, այն ժամանակ և Աստուած իւր դատաստանն է կատարում; կորցնելով չարդործը:

§ 9. «Ե՞՞յլ որդիւր:

Դարի զաւակները ստանում են իրանց հօր օրհնութիւնը, իսկ չարերը՝ անէծք. այս տեսնեում է «Եսի երեք որդւոց մեջ՝ Աէմի, Քամի և Յարեթի: «Ես Տապանից դուրս գալով բնակուեցաւ Մասիս սարի փեշումը, ուր տնկեց այգի. երբ որ խաղողը հասաւ, քամեց, և չգիտենալով զինու զօրութիւնը՝ խմեց այնչափ, որ հարբեցաւ, և քնած ժամանակ յետ ձգեց իրմէն շորը, ու երևեցաւ մերկութիւնը: Պլատիկ որդին Քամ տեսնելով այս, զնաց

պատմեց իւր եղբայրներուն ծիծաղելով, իսկ Աէմ և Յարեթ վեր առան շոր և քամակ քամակ գնալով ծածկեցին հօր մերկութիւնը: «Ես երբ որ զարթեցաւ, իմացաւ Քամի արածը, և օրհնեց Աէմին ու Յարեթին, իսկ Քամին անիծեց: Քամից ծնուեցան չար զաւակներ, և Աստուծոյ եկեղեցին պահուեցաւ Աեմայ ազգի մեջ, որի որդին Արփաքսադ կառավարիչ եղաւ Եստուծոյ եկեղեցներ:

* * * * *

§ 10. Ա. Եղիշեականուն-Անուն.

«Եսի սերեւմը բաժմանալով Հայաստան աշխարհում, քօնեցին դէպի ի Միջազէտք Անասարի գաշտը, և խօսում էին մէկ լեզով: «Եսցա մեջ ծնաւ ամբարտաւան հոգի շինել յիշառակարան — քաղաք և աշտարակ, որի գլուխը հասնի մինչեւ երկինքը, և սկսեցին շինութիւնը: Աստուած պատժեց նորանց այս ամբարտաւանութիւ-

նը՝ խառնակելով նոցա լեզուները այնպէս,
որ այլ ևս չ'կարացին հասկանալ մէկ զմե-
կու խօսքը, և շինութիւնը մնաց կիսատ,
ու ցըռւեցան զանազան կողմեր աշխարհի
երեսին, և այն կիսակատար շինութիւնը
կոչուեցաւ Բաբելոն, որ կը նշանակէ Եա-
նակունիւն:

§ 11. Առաջալուստ-Եւան ունիթը:

Լեզուների խառնակութեան հետ մը-
տաւ ժողովրդեան մէջ և կամքի հանուք-
ները. նոցա մէջ սկսաւ նսեմանալ ձևա-
րիտ Վստուածպաշտութեան լրյուր, նոքա
մոռացան ձշմարիտ Վստուածը, և սկսե-
ցին պաշտել արեգակը, լուսինը և աստ-
ղերը, և հետն ու հետը զանազան երկրա-
յին արարածներ, և մարդիք: Այս կոչ-
ւում է հատուալուստ-Եւան կամ հենանուս-
նիւն: Աեմայ ազգը ևս լինկաւ կոտպաշտու-
թեան մէջ, վասն որոյ Վստուած իւր եկե-

զեցին վերանորոգելու համար ընտրեց Աե-
մի ցեղեց մէկը՝ Վրբահամ անունով:

§ 12 Առաջալուստ-Եւան անունով:

Երբ որ կոտպաշտութիւնը տիրել էր
աշխարհի վերայ, Վստուած, իւր Եկեղե-
ցին վերականգնելու համար ընտրեց Աե-
մայ ցեղեց մէկ տուաքինի և բարեպաշտ
մարդ Վրբահամ անունով, որ կենում էր
Քաղգեացւոց աշխարհում: Արամայեց
Վրբահամին թողնել իւր հայրենիքը և
ազգը, և գնայ բնակուի այն երկրում, զոր
նա կը ցուցանեն բան, խստանալով առ-
նել զնաս բազմաթիւ զաւակներու հայր,
և թէ նորա ազգից կը ծնի աշխարհի Փըր-
կիսը: Վրբահամ հաւատաց Վստութոյ
խօսքին, ու գնաց այն անծանօթ աշխար-
հը. սա էր Քանանացւոց երկիրը, որ կոչ-
ւում է Պաղեստինայ, և մայրաքաղաքն է
Երուսաղէմ:

§ 13. Ա-ի Ա-ա-ս-ո-ւ-ն-ո-յ Ե-ր-ա-հ-ա-մ-ի հ-ե-ա-բ-

Ա-ս-ո-ւ-ա-ծ, ա-ւ-ե-լ-ի հ-ա-ս-տ-ա-տ-ե-լ-ո-ւ հ-ա-մ-ա-ր
Ե-ր-ա-հ-ա-մ-ի հ-ա-ւ-ա-տ-ը և յ-ո-յ-ո-ր ի-ւ-ր վ-ե-ր-ա-յ,
ե-ր-ե-ռ-ո-ւ-մ է-ր ն-ր-ա-ն ե-ր-ա-զ-ո-ւ-մ և տ-ե-ս-ի-լ-ք-ո-վ:
Մ-է-կ ա-ն-գ-ա-մ ե-ր-ե-ք-ա-ւ ն-ր-ա-ն, և ա-ս-ա-ց, ո-ր
ն-ա կ-լ-ի-ն-ի շ-ա-տ ա-զ-գ-ե-ր-ո-ւ հ-ա-յ-ր, կ-ո-ւ-տ-ա-յ
ն-ր-ա-ն և ն-ո-ր-ա զ-ա-ւ-ա-կ-ն ե-ր-ո-ւ-ն ք-ա-ն ա-ն-ա-տ-
ց-ւ-ո-ց ե-ր-կ-ի-ր-ը, և ա-յ-ս ո-ւ-խ-տ-ի ն-շ-ա-ն ս-ա-հ-մ-ա-
ն-ե-ց ն-ի-տ-ա-պ-ո-ւ-ն-ի-ն-ը, ո-ր տ-ղ-ա-յ ե-ր-ե-խ-ա-յ-ն ո-ւ-
թ-ը-ն օ-ր-ա-կ-ա-ն թ-լ-փ-ա-տ-ո-ւ-ի, և խ-ո-ս-տ-ա-ց-ա-ւ
և ո-ր ն-ր-ա-ն կ-ը ծ-ն-ի ո-ր-դ-ի, և ա-ն-ո-ւ-ն-ը կ-ը-
դ-ն-է խ-ա-հ-ա-կ-ի:

§ 14 Ա-ա-ս-ո-ւ-ն-ո-յ հ-ե-ր է գ-ա-լ-ի Ե-ր-ա-հ-ա-մ-ի-ն:

Ե-ր-ա-հ-ա-մ-ի հ-ի-ւ-ր-ա-ս-ի-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն-ը ա-յ-ն-չ-ս-տ-ի
մ-է-ծ է-ր, ո-ր Ա-ս-ո-ւ-ա-ծ հ-ի-ւ-ր ե-կ-ա-ւ ն-ո-ր-ա
մ-օ-ս-: Մ-է-կ օ-ր Ե-ր-ա-հ-ա-մ վ-ր-ա-ն-ի դ-ր-ա-ն-ը
ն-ս-տ-ա-ծ է-ր, տ-ե-ս-ա-ւ ո-ր ե-ր-ե-ք օ-տ-ա-ր-ա-կ-ա-ն
դ-ն-ո-ւ-մ ե-ն դ-է-պ-ի ի-ն-ք-ը, գ-ն-ա-ց ն-ո-յ-ա ա-ռ-ա-ջ

ո-ւ հ-ր-ա-ւ ի-ր-ե-ց, պ-ա-տ-ր-ա-ս-տ-ե-ց ս-ե-ղ-ա-ն և ն-ո-
ր-ա-ն-ց-մ-է մ-է-կ-ը է-ր Ա-ս-ո-ւ-ա-ծ. հ-ա-յ ո-ւ-տ-ե-լ-ո-ւ-
ժ-ա-մ-ա-ն-ա-կ Ա-ս-ո-ւ-ա-ծ կ-ր-ի-ն-ե-ց ի-ւ-ր խ-ո-ս-տ-ո-ւ-
մ-ը Ե-ր-ա-հ-ա-մ-ի-ն, ո-ր ն-ա կ-ը ծ-ն-ի ո-ր-դ-ի. բ-ա-յ-ց
ն-ո-ր-ա Ա-ա-ր-ր-ա կ-ի-ն-ը, ո-ր վ-ր-ա-ն-ի ե-տ-ե կ-ա-ն-գ-
ն-ա-ծ է-ր, ծ-ի-ծ-ա-ղ-ե-ց-ա-ւ, և յ-ա-ն-դ-ի-մ-ա-ն-ո-ւ-
ց-ա-ւ ա-ն-հ-ա-ւ-ա-տ-ո-ւ-թ-ե-ա-ն հ-ա-մ-ա-ր: Ա-յ-ս խ-ո-ս-
տ-ո-ւ-մ-ը կ-ա-տ-ա-ր-ե-ց-ա-ւ մ-է-կ տ-ա-ր-ո-ւ-ա-յ վ-ե-ր-ա-յ
ե-ր-ը ո-ր Ե-ր-ա-հ-ա-մ է-ր 100 տ-ա-ր-ե-կ-ա-ն, և
Ա-ա-ր-ր-ա 90 տ-ա-ր-ե-կ-ա-ն ծ-ն-ա-ւ ո-ր-դ-ի, և ա-ն-ո-ւ-
ն-ը դ-ր-ի-ն Խ-ս-ա-հ-ա-կ-ի:

§ 15. Ա-ս-ո-ւ-ն-ո-յ և գ-ա-ն-ո-յ կ-ո-ր-ժ-ա-ն-ո-ւ-ն-է:

Ո-չ չ-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն-ն է մ-ն-ո-ւ-մ ա-ն-պ-ա-տ-ի-ժ-,
և ո-չ բ-ա-ր-ո-ւ-թ-ի-ւ-ն-ը ա-ն-վ-ա-ր-ձ: Ա-ո-դ-ո-մ և
գ-ո-մ-ո-ր ք-ա-ղ-ա-ք-ն-ե-ր-ո-ւ բ-ն-ա-կ-ի-չ-ն-ե-ր-ո-ւ չ-ա-ր-ո-ւ-
թ-ի-ւ-ն-ք-ը բ-ա-ր-ձ-ր-ա-ց-ա-ն մ-ի-ն-չ-ւ ե-ր-ե-կ-ի-ն-ք-ը, և
Ա-ս-ո-ւ-ա-ծ վ-ճ-ռ-ե-ց կ-ո-ր-ծ-ա-ն-ե-լ ա-յ-ն ք-ա-ղ-ա-ք-
ն-ե-ր-ը. ո-ւ-ս-տ-ի ո-ւ-զ-ա-ր-կ-ե-ց ե-ր-կ-ո-ւ հ-ր-ե-շ-տ-ա-կ-
ն-ե-ր, ո-ր-ք ա-զ-ա-տ-ե-ց-ի-ն ա-ր-դ-ա-ր Պ-ո-վ-տ-ի-ն ն-ո-յ-ա

Հետ ոչնչանալուց, և ապա իջաւ երկնքից
կրակ ու ծծումբ, և այրեց բոլորը թէ քա-
ղաքներում և թէ գաշտերում, որի տեղը
կանգնեցաւ լի՛ճ, և կուռումի է Աշուաւ-
ժու:

§ 16. Խստհամի զենու հու:

Եստուած աւելի փառաւորելու համար
Եբրահամի հաւատը, փորձում է զնա:
Երբ որ Խսահակ ԶՅ տուրեկան էր, հրա-
մայում է նրան ողջակեղ մատուցանել
Եստուծուն իւր միսակ Խսահակ որդին:
Եբրահամ ամենեին չէ զրդւում այս հը-
րամանի վերայ, այլ ամենայն հնատգանդու-
թեամբ տանում է Խսահակին նշանակած
տեղը, որ էր Գողգոթայ սարը՝ զոհելու:
Եբրահամ կապեց որդու ձեռներն ու ուս-
երը, ու դրաւ սեղանի վերայ, և երբ որ
սուրեն առաւ ձեռը, որ մօրթէ, ահա Ես-
տուծոյ հրեշտակը արգելեց նրան: Եստ-

ու ած նորա այսպիսի անօրինակ հնագան-
գութեան համար օրհնում է նրան, և
կրկնում է իւր խոստմունքը: Եյս անցքը
նշանակում էր Քրիստոսի մեռնիլը Խաչի
վերայ մեր վրկութեան համար:

§ 17. Խստհամի որդիւը:

Հնագանդ որդին ժառանգում է ծնո-
ղաց օրհնութիւնը: Եյս տեսնում ենք
Խսահակի որդւոց մէջ: Նա ունէր երկու
որդի, Եսաւ և Յակոբ, երկուսն էլ զա-
նազան յատկութիւնք ունեին: Եսաւ էր
վայրենարարաց, տմարդի, բարկացող, և
օրաբորդութեամբ էր պարապում, և սիրե-
լի էր հօրը որսորդութեան համար: Նա
ծնողաց կամքին հակառակ առաւ երկու
կին կռապաշտ ազգից, որ Եստուած ար-
գելել էր նոցա հետ խնամութիւն անել:
Խսկ Յակոբ էր խաղաղ, պարկեշտ և հնա-
գանդ ծնողաց, նա մնում էր տանը և օգ-

նում էր իւր մօքը տան գործերի մէջ, և
մայրը սիրում էր նրան։ Եթիւ
Երբ որ Խսահակ ծերութեան հասա-
կում կուրացաւ, ասաց Խսաւին, որ գնայ
որս բերէ, ու կերակուր պատրաստէ, որ
ուտէ և օրհնէ նրան։ Եյս լսելով Ուերե-
կայ, պատրաստեց նորտ ուզած կերակուրը,
և Յակոբի ձեռով ուղարկեց. կերաւ Խսա-
հակ և օրհնեց նրան։

§ 18. Յակոբի գնաւը Մշկադեռ + և նորտ
մասկը ուրիշը։ Այսու մասին պատճենը այսու
Յակոբ վախենալով Խսաւի բարկու-
թենից և նախանձից՝ որ չսպանէ օրհնու-
թիւնը խլելու պատճառաւ՝ փախաւ Ո՞ի-
ջագետք Խսառան քաղաքը իւր մօքեղբայր
Խաբանի մօտ, ու պսակուեցաւ նորա եր-
կու աղջկայ հետ, ուր կացաւ քսան տա-
րի։ Եյսափ ժամանակում ծնաւ տասներ-
կու որդիք, որք եղան նահապետներ Խս-

րայէլացւոց տասներկու ազգին։ Յետոյ
Յակոբ իւր բոլոր ընտանիքով յետ գար-
ձաւ հրանանացւոց երկիրը իւր Հօր տու-
նը և ստացաւ Խարայէլ անունը, ու եղաւ
կառավարիչ Ըստուծոյ Եկեղեցու, և սորա
տան մէջ պահուեցաւ Ճշմարիտ հաւատը։

§ 19. Յուլիէի լսեմառում։ Այսու

Յակոբի տասն մեծ որդիքը շատ էին
տրտմեցնում հօրը իւրեանց մոլի կեանքով։
Դոցա մէջ միայն Յովակին էր միմիթարու-
թիւն հօր՝ իւր պարկեցութեամբ, և Յա-
կոբ շատ էր սիրում նրան։ Եյս սէրը զար-
թեցրեց նորա և եղայրներու մէջ ատելու-
թիւն դէպ ի նա, մինչև որ կամենաւմ էին
սպանել, եթէ Ո՞ուրէն մեծ եղբայրը չէր
ազատել, և յետոյ վաճառեցին օտարազ-
գի վաճառականներու վերայ, որով ձգե-
ցին ծերունի հօրը անմիմիթար սգի մէջ,
ասելով՝ թէ գաղանը կերաւ։

§ 20. Յակեմը Խաչիպատում:

Խամայէլացիք վաճառեցին Յովսէփին Խ-
ղիպտոսում՝ Գետափրէ պալատականի վե-
րաց: Նա լինելով օտար երկրում ինչպէս
գերի, վարում էր իւր կեանքը առաքինու-
թեամբ և համեստութեամբ, և սոքա եղան
նորա համար պատճառ զանազան նեղու-
թեանց, մինչև որ բռնուեցաւ բանտում:
Ըստ Աստուած, որ փորձումէ առաքինի
մարդիքը զանազան փորձանքների մէջ, և
իւր օդնութիւնը չէ կարում նորանցմէն,
այնպիսի բաղդաւորութեան հանգրեց Յով-
սէփին, որ երբէք մատածել չէր կարելի: Կա
սիրելի եղաւ Փարաւօնին, ապագայ եօթնա-
մեայ սովոր գուշակելու համար. և կարգեց
նրան իւր երկրորդ և Եղիպտոսի իշխան, և
յանձն արաւ Յովսէփին պատրաստել ցոր-
եան պաղաքեր տարիներում, որ սովի ժամա-
նակ ժողովուրդը հացունենայ ուտելու: Յով-
սէփ կատարեց այս յանձնարութիւնը:

§ 21. Յակեմը Եղիպտոս Գալը Խաչի-

պում: Երբ որ սովոր ամենայն տեղ սաստկա-
ցաւ, Յովսէփի եղեայրները եկան Եղիպ-
տոս ցորեան գնելու: Յովսէփ արգեն ու-
ներ լաւ միջոց վրէժինդիք լինելու իւր եղ-
բայրներուն իրա ընդդէմ գործած յան-
ցանքների համար, բայց նա ամենեին չէ
յիշում նոցա չարագործութիւնը, այլ ըն-
դունում է սիրով, և երկրորդ անգամի
յայտնում է, թէ ինքը նոցա եղբայրն է,
և առատ պաշարով ուղարկում է յիտ,
պատուիրելով բերել Եղիպտոս իւրեանց
հօրը բոլոր ընտանիքով:

§ 22. Յակոբի Գալը Խաչիպատում:

Յակոբ սամնալով Յովսէփի կենդանու-
թեան լուրը՝ լցուեցաւ մեծ ուրախու-
թեամբ, և շուտով ճանապարհ ընկաւ:

Յովսէփ ընդ առաջ գնաց հօրը մեծ բազմութեամբ և այնպէս ընդունեց: Իմաց արաւ Փարաւոնին իւր հօր գալուստը բոլոր ընտանիքով, և ներկայացրեց թագաւորին, և ամեն կերպով աշխատում էր, որ Յակոբ անցուցանէ իւր կեանքը երջանկութեամբ և խաղաղութեամբ: Այսպիսի կերպով փոխեցաւ Աստուծոյ Եկեղեցին Յակոբի ընտանեաց մէջ Քանանացւոց երկրից Եղիպատացւոց Գհէսեմ քաղաքը, ուր ունեցան իրանց հաստատ բնակութիւնը:

§ 33. Եպոս-ժայ Եկեղեցին Աբրահամի պանչից:

Բացի Աբրահամի տանից, կային և ուրիշ տեղեր Ճշմարիտ Աստուծածապաշտներ՝ որք էին Մելքիսեդեկ և Յոր:

Մելքիսեդեկ էր թագաւոր Սաղիսայ, այսինքն Երուսաղէմի. նա էր քահանայ Աստուծոյ բարձրելոյ, և նորա հայրն ու

մայրը յայտնի չեն թէ ո՞ք էին, նա խորհրդաբար նկարագրում էր երկնաւոր քահանայապետ Յիսուս Քրիստոսին:

Յոր բնակւում էր Արաբիայի Ասիր գաւառում, էր յոյժ մեծատուն և առաքինի, ամենքից պատուած որպէս թագաւոր, ունէր հաստատուն յոյ, Աստուծոյ վերայ, և ոչ մի ամենաթշուառ փորձութիւն չկարացին շարժել նորա Ճշմարիտ հաւատը: Աստուծածաշունչ սուրբ գիրքը պատում է, թէ Աստուծած փորձելուց յետոյ Յորի համբերութիւնը, վարձատրեց նրան առատապէս քան զոր առաջ ունէր, և կոչեցաւ Համբերահայր:

§ 24. Իսրայէլաց-ոց Արարանուը Եգիպտոսաւում:

Յակոբի և Յովսէփի մահից յետոյ բազմացան Իսրայէլացիք Եղիպատում, մինչ որ ահարկու երկեցան Եղիպատացւոց

թաղաւորներուն, որ մի գուցէ աւելի
հզօրանան և տիրեն Եղիպառոսին, ուստի
ժամանակ շտալու համար, որ մտածեն
նոքա իւրեանց ազատութեան վերայ, և
արական սեռը պակսեցնելու համար, ծա-
ռայացնում էին զսնազան ծանր աշխա-
տութեանց մէջ, և թագաւորը հրամայեց
տատմայրերուն, որ Խորայէլացւոց նորա-
ծին երեխայքը խեղդեն. սակայն Աստու-
ծոյ օրհնութիւնը աւելի բազմացնում էր
նոցա թիւը:

§ 25. Մովչեակ Ճնշենքը, և իսկուսաբ:

Այն հալածանքի ժամանակ ծնաւ Մով-
սէս: Եորա մայրը երեք ամիս ծածուկ պա-
հեց նրան, և յետոյ թագաւորի երկիւղեց
դրաւ երեխային մէկ փոքրիկ մնատուկի մէջ,
ու ձգեց Եւղոս դետի ափումը: Այդ մի-
ջոցին գալիս է Փարաւոնի աղջկը լեզնա-
լու դետումը, և տեսնելով մնատուկը հրա-

մայեց րերել, և գտաւ նորա մէջ երեխայի,
որ լացլում էր: Թագաւորի աղջկայ սիր-
ող գութ շարժեցաւ, և տուաւ մէկ ծծմոր
պահելու. նա էր երեխայի մայրը: Երբոր
մանուկը երեք տարեկան եղաւ, Փարաւոնի
զուսոր արաւ նրան իւր որդեգիր, և ա-
նունը զրաւ Մովչես, որ կնշանակէ զրեց
հանաժ: Մովսէս մեծացաւ թագաւորական
պալատում 40 տարի, և վարժուեցաւ
եղիպտական իմաստութեամբ: Ապային նաև
որ Աստուծումէն սահմանած էր Խորայէլի
փրկիչ, փախաւ Մադիամացւոց երկիրը,
վախենալով՝ որ Փարաւոն չպանէ նրան,
իւր մէկ Եղիպտայի սպանելու պատճա-
ռաւ: Եւա մնաց օտարութեան մէջ 40 տա-
րի և պարապում էր խանարածութեամբ:

§ 26. Մովչեակ Դեպանութիւնը Փարաւոնին Տօդ:

Մէկ օր Մովսէս արածացնելով ոչխար-
ները Մինայ սարի մօա՝ տեսնում է, որ

մորենին վառուած է, և չէ այրւում. և
երբ որ մօտ դնաց տեսնելու, յանկարծ
լսում է մորենու միջեց ձայն, այս ձայնն
էր աստուածային, որ նրան ռւղարկում է
Փարաւոնի մօտ իւր ժողովուրդը արձակե-
լու: Ո՞վէս և նորա եղբայր Ահարոնը
ներկայանում են Փարաւոնին, և պատ-
մում են Աստուծոյ հրամանը, բայց նա
չսկց, և ապա տասն հրաշքներով, որի
վերջնն էր Եզիպտացւոց բոլոր անդրաւ-
նիկներու ջարդելը, հազեւ թէ կակլացաւ
Փարաւոնի խստասրտութիւնը, և արձա-
կեց Իսրայէլացիքը:

§ 27. Իսրայէլաց-ոց ելու. — Պատէլու. —
Փարաւոնի հորո-ոտը:

Իսրայէլացիք Եզիպտասից գուրա գա-
լուց առաջ՝ Աստուծոյ հրամանով պիտի
կատարեին Պատէլը վերջն երեկոյին Կի-
սան (Արտ) ամսի 14ին: Ամեն տուն-

պիտի մորթէր անարատ և շիշակ գառը,
խորովել, և ուտել բաղարջով, որ նշա-
նակում էր մեր փրկութիւնը Յիսուսի
Քրիստոսի դենլով խաչի վերայ, և սահ-
մանեց ամենայն տարի կատարել նոյն ամ-
սաթուին իրանց ազատութեան յիշատակ
Եզիպտասից: Այն երեկոյին Իսրայէլացիք
Ճանապարհ ընկան դէպի Կարմիր ծովը:
Այս ժամանակ Աստուած առաջնորդում
էր նոցա ցերեկը ամպեղն սիւնով, և գի-
շերը հրեղն սիւնով, որ ցուցանում էր
Ճանապարհը: Երբ որ հասան Կարմիր
ծովի ափը, ահա Փարաւոն հասաւ նոցա
ետևից, զօրքով: Իսրայէլացիք ընկան
ահուգողի մէջ, և Ո՞վէս Աստուծոյ
հրամանով խփեց գաւազանը ծովին, և
ջրերը որպէս քարէ պարիսպներ կանգնե-
ցան աջ ու ձախ, ու Իսրայէլացիք անցան
միւս ափը ինչպէս ցամաքի վերայ: Փարաւ-
ոն պնդեցաւ նոցա ետևից, և Ո՞վէս խփեց կրկին գաւազանը, և միացան ջր-

րերը, ու խեղդեցին Փարաւոնին բոլոր
զօրքով:

ԵԿԵՂԵՑԻՆ ԳՐԱՒՈՐ ՕՐԵՆՔԻ ՆԵՐՔՈՅՑ.

§ 28. Տասն պատուիշաններ:

Եղիպտոսից գուրս գալուց յիսուն օր-
ուայ վերայ տալիս է Աստուած Խորայէլա-
ցւոց Մովսէսի ձեռքով Աինա սարի վե-
րայ տասն պատուիրաններ զրած երկու
քարեղին տախտակների վերայ, և Եկեղե-
ցին մանում է զրաւոր օրէնքի ներքոյ. որ-
պէս զե Խորայէլացւոց կոպտութիւնը,
խստարտութիւնը, հակամիտութիւնը դէ-
պի կուապաշտութիւն բոլորվին վերացնէ,
և շնչէ նրանցը քաշաքավարի, կրթեալ և
Աստուածապաշտ ժողովուրդ:

Տասն պատուիրաններով Աստուած ու-
սուցանում է մեզ մարդկային երկու զըլ-
խաւոր և հարկաւոր պարտաւորութիւնքը

մեր բոլոր կեանքի մէջ, այն է Աստուած-
ականութիւն և ընկերութիւն, և են սոքա.

1, Ես եմ քո Տէր Աստուածը, բաց ի
ինձմին՝ ուրիշ աստուածներ չունենաս:

2, Վո համար կուռք չշնես, երկրպա-
գութիւն չտաս և չպաշտես նրանց:

3, Վո Տէր Աստուածոյ անունը չյիշես
մնոտի բաների վերայ:

4, Ե արաթ օրը սուրբ պահես, վեց օր
քո ամենայն գործերդ կատարես, և եօթ-
ներրորդ օրը, որ է քո Տէր Աստուածոյ շա-
բաթը գործ չանես:

5, Պատուիր քո հօրն ու մօրը, որ քեզ
բարի լինի, և երկար կեանք ունենաս եր-
կրի վերայ:

6, Մի սպանաներ:

7, Մի շնար:

8, Մի գողանար:

9, Մի սուտ վկայեր ընկերիդ համար:

10, Մի ցանկանար քո ընկերի ամենայն
ունեցածներուն:

§ 29. Ավելցական և +աղաւախոն օբյեկտ:

Բացի տաճն պատուիրաններից Աստուած տալիս է և ուրիշ օրէնքներ, որը էին նոցա եկեղեցական և քաղաքական կարգաւորութեանց համար: Մինչ այս ժամանակ Խարայէլեան նահապեաները չունէին նշանակած Աստուածապաշտութեան համար մէկ հաստատ տեղ և ժամանակ, այժմ Մովսէս Աստուածոյ հրամանով շենց Խկեղեցին, որ կոչեցաւ Խորան վայումնեան, որ էր մեծ վրան, ուր լինում էր հանդիսով Աստուածապաշտութիւն, և բաժանեւմ էր երեք, 1, Առահ, ուր լինում էին զոհագործութիւնքը և օրինական լուացմունքը. 2, Արքունիւն, ուր էին առաջաւրսաց սեղանը, որի վերայ դնում էին տաճներիու բաղարջ հացեր. Խոնչ սեղանը և եօթնաջահեան աշխատակը. 3. Արքունիւն աշխ, ուր էր Տաղանակ՝ սեղան, և նորա մէջ կային օրէնքի տախտակ-

ները, ոսկէ սափորը մանանայով լեբը, և Եհարոնի ծաղկեալ գաւաղանը, և նորա առջև Մովսիսական օրէնքի գիրքը: Խսրայէլայշիք ունիին և եկեղեցական տօներ. 1, Շաբաթը, այն օրը գործ չէին կատարում. 2, Պատաւ և առն բաղարջակերպ, էր յիշատակ աղաւութեան Խզիպ-առսից. 3, Պէնառէկոսուրէ, յիշատակ տաճն պատուիրանների տալուն, 4, Տարչէդլուրէ, որ էր քաղաքական ամսի առաջին օրը. 5, Վասուն-նէտան գոճ. 6, Տաղանաշահարպ, յիշատակ քառասնամեայ ձանապարհորդեան Արաբիայի անապատում. 7, Աճառիլի, որ իմաց էին տալի փողեր փշելով: Կոցա Աստուածապաշտութեան սրբազն գործողութիւնքն էին. 1, Ողջակէպ՝ որ բայրութիւն կայրէին զոհը. 2, Փէնունէտան և խաղաղունէտան զոհ, էր նշան շնորհակալութեան Աստուածումէն ընկալած բարերարութեան համար. 3, Վասուն-նէտան զոհ, ակամայ և անգիտութեան մեղքի համար.

4, Նանապարզութեան ողջակեռ, որ ամենայն առաւօտ և երեկոյ կը մատուցանէին.
5, Ես-էլք կամ անարէ-ան զբհ, որ էր շարմաղալիւր, ցորենինոր հասկ բոված, իւղ, զինի, աղ, ինդրուկ կամ խունկ:

Արբագործ պաշտօնեայքն էին. 1, Քահանայապետ, 2, քահանայք, որք էին Եհարոնի ցեղեց. նոյա գործն էր զոհադործիւն և խունկ ծիել վիայութեան խորանում, և 3, Պետացիք, որք էին խորանի հասարակ ծառայողներ:

§ 30, Քառասնամեայ ճանապարհութեան նէան:

Խսրայելացիք լինելով կոշտ ու կոպիտ ժաղովուրդ, և առջորած ստրկութեան, երբէք չէին զգում ազատութեան իրաւունքը և պատիւր, Աստուծոյ արած բարերարութիւնքը: Կոքա միշտ տրանջումէին Մովսէսի վերայ, յիշում էին Եղիպտոսի

սոխ ու սխտորը, ձմերուկը, միսը, հացը, բայց ոչ երբէք քաշած չարչարանքը և նեղութիւնքը: Կոքա չհասկացան աստուծածային խնամքը, որ ոչինչ չէր պակաս նրանցը Ճանապարհորդութեան ժամանակ, չհասկացան թէ Աստուծած երկնային հացով է կերակրումնրանցը, ապառաժ քարերից ջուր է բղիւեցնում, ժամանակին մոնվ է կերակրում, մինչև անդամ ընկնիլ և կռապաշտութեան մէջ, երկրպագութիւն տալով ոսկէ հորթին: Թէսկէտ Աստուծած զանազան տեսակ մահով և սպանելով պատժեց նրանցը, այլ նոքա մնացին անզգացողութեան մէջ, ուստի վճռեց որ քսան տարեկանից բարձր մեռնին անապատումը, և ժամանակ նշանակեց ԱՅ տարի, թափառական շրջեցնելով Երարիայի ապառաժ անապատի մէջ, մինչև որ մեռան, և ապա մժան Աւետեաց երկիւ ստհմանները:

§ 31. Տեսանորդաց ժամանակի
վրայ:

Մովսիսի մահից յետոյ Խորայէլացիք
կառավարւում էին դատաւորներով, բայց
կառավարութիւնն էր Աստուածապետա-
կան, որովհետև Աստուած էր դատաւոր
ընտրողը, և ամենայն դորձերի ու պատե-
րազմերի մէջ ներգործողը: Մովսէս իւր
մահուան ժամանակ, Աստուածոյ հրամա-
նով ընտրեց Յեսու Կաւեայ որդին իւր
փոխանորդ առաջնորդ Խորայէլեան ազգի:
Կա յաղթեց Յորդանան գետի երկու
կողմի ազգերին, և տիրեց Արանանացւոց
երկրին, որ կոչում է Պաղեսաինայ, և
այսպէս կատարեցաւ աստուածային խոս-
տումը տուած Աբրահամին, և Նոյի անէծ-
քը տուած Արանանին: Յեսու բաժանեց
նուածած երկիրը Խորայէլեան ցեղերու
վերայ, իսկ Վետական աղջը չըւնեցաւ
առանձին բաժին, այլ պիտի ապրէին զո-

Տերից և տասանորդից, և նոյա բնակու-
թեան համար նշանակուեցան մի քանի
քաղաքներ իւրաքանչեւը ցեղի մէջ: Ա կա-
յութեան խորանի տեղն էր Անլոմ քաղա-
քը Եփրեմի վիճակում: Յեսուայ մահից
յետոյ ընտրւում են Դատաւորներ:

Դատաւորաց դարը նկարագրում է Խո-
րայէլացւոց կրած թշուառութիւնքը շըր-
ջակայ կուապաշտ ազգերից, որոց ներքոյ
ընկան օրէնքի զանց առնելով: Չարու-
թեանց պատճառն էր, որ Խորայէլացիք
Յեսուայ մահից յետոյ, ոչ թէ վերջացրին
Քանանու ազգի մնացորդը, այլ առնելով
զնոսա հարկատու, ունեցան նոյա յետ
յարակցութիւնք, մանաւանդ ամուսնու-
թեամբ, նորա պտուղներն եղան, թողուլ
ձշմարիտ Աստուածը և պաշտել Բահա-
դը (արեգակ) և Աստարաը (լուսինը),
որը էին Արանանացւոց զինաւոր կուռքե-
րը, և բարքի սպականութիւն, յաճախա-
կի անիշխանութիւն, վիսադարձ նախանձ

և վէճեր՝ զանազան ցեղերու մէջ, բազ-
մամեայ ստրկութիւն այլազգեաց իշխանու-
թեան ներքոյ: Այս ստրկական լծի ծան-
րութիւնը, որի տակ ձ'նշում էին, զգաց-
նումէր նոցա յանցանքը, և զարթեցնում
էր նոցա միտքը դիմել առ Աստուած.
յայնժամ Աստուած յարուցանում էր
ընտրեալ անձինք մինը միւսից յետոյ, որ
կոչւում են Դատաւուր+ Խորակէւ: ‘Ե՞քա
քաջալերուած աստուածային ոգւով՝
յաղթում էին թշնամեաց, ազատում էին
ազգը նոցա լծի տակից, վերականգնում
էին ծշմարիտ աստուածպաշտութիւնը, և
կառավարում էին ազգը մինչեւ իւրեանց
մահը: ‘Եոցա թիւն է 12, որոց մէջ երե-
ւելի են Գերորա կին մարգարէուհի և
Ռարակ, Գեղեռն, Յեփթայէ և Ամսոն:
Ոոցա հետ պէտք է հաշուել և ձեղի քա-
հանայապետը, որ ամենքից յետոյ առաւ
իւր ձեռքը գատաւորի իշխանութիւնը
քահանայապետութեան հետ, և Ամսոն-

էլ, որ էր մարգարէ և Դատաւոր: ‘Եոքա
պատերազմում էին զօրքով, և յաղթե-
ցին Վանանացւոց, Մաղիամացւոց, Ա-
մաղէկացւոց և Ամմոնացւոց, բայց Ամ-
սոն առանց զօրքի ինքն միայնակ էր պա-
տերազմող Փղշտացւոց հետ: ‘Եա էր Կա-
զովքեցի, այսինքն ուխտեալ Աստուածոյ,
գինի և արաղ չպիտի խմեր և նորա գլխին
չպիտի դիպչէր ածելի, և նորա զօրութիւ-
նը, որ բնականից դուրս էր, մազերի մէջն
էր: Այս ընտրեալ մարդը ցուցեց իւր օրի-
նակով, թէ մէծ և հզօր մարդիկ ենթար-
կուած են և մեծ թուլութեան: ‘Եա թըշ-
նամեաց ահարկուն յաղթուեցաւ մի պոռ-
նիկ կնոջից Դալիլա անունով, որի հետ
ուներ սասափիկ սէր, և յայտնեց նրան իւր
զօրութիւնը թէ մաղլերիցն է, վասն որոյ
կինը ածիլել տուաւ նորա գլուխը, և
Ամսոն ընկաւ թշնամեաց ձեռքը, ու կու-
րացաւ: Այս եղաւ անզդամ կին սիրելու
հետեանքը:

§ 32. ՏԵ՛ԿՈՒՆԻՒՆ Առաջաւորաց ժամանակի
վլբայ:

Ամույէլ ծերութեան հասակում բա-
ժանեց դատաւորական կառավարութեան
բեռլիւր երկու որդւոց վերայ, որք առա-
քինութեամբ և անշահասիրութեամբ չէին
նմանում իրանց հօրը. նոքա առնում էին
յանցաւորից կաշառք և ուղիղ դատաս-
տան չէին դատում. ժողովուրդը զզուած
և նեղացած նոցա կաշառառութիւնից,
խորհուրդ արին դատաւորական կառավա-
րութեան յեղափոխութեան վերայ, և
քաղաքական միավետական իշխանու-
թիւն հաստատելու համար. վասն որոյ
ներկայանումէն Ա ամունէին, և խնդրում
էն տալ նրանց թագաւոր միւս ազգերու
նման: Ամունէլ շատ է նեղանում այս
առաջարկութեան վերայ, յորդորում է
և համոզում է զնոսա հեռանալ այնպիսի
նպատակից, ասելով՝ թէ Աստուած է նո-

յա թագաւորը, բայց լսող չկայ, զե գլխա-
ւոր պատճառ այն ապստամբութեան էին
նորա որդիքը: Մարգարէն չգտաւ ոչինչ
հնարք զապելու կամ խաղաղացնելու ժո-
ղովրդեան խոռվութիւնը, դիմում է առ
Աստուած, և ստանում է աստուածային
համաձայնութիւնը թագաւոր կարգելու,
և Աստուածոյ ցուցանելով ընտրում է Աս-
ւուղ Ախեանին Բենիամինի ցեղից:

Ասւուղ թագաւորեց քառասուն տա-
րի, և այսչափ միջոցում երկու տարի
միայն կացաւ Աստուածոյ հնազանդութեան
մէջ. իսկ 38 տարի գնաց Աստուածոյ հրա-
մաններին հակառակ: Ամույէլ յայտնեց
նրան աստուածային վճիռը, թէ նորա
թագաւորութիւնը խլած է նորա տանից
և ուրիշն է տուած. և նորա կենդանու-
թեան ժամանակ Ամույէլ Աստուածոյ
հրամանով օծեց Յուդայի յեղից Յե-
սեայ որդի Դաւիթը թագաւոր Խարայէլի:
Այս պատճառով Ասւուղ հալածում էր

նրան և ետևից ընկել էր սպանել, և Դա-
վիթ շրջում էր թափառական մինչև Սո-
ւուղի սպանուելը Փղշացւոյ պատերազ-
մում: «Եորա մահից յետոյ Դաւիթ հան-
դիսով օծուեցաւ թագաւոր Քերընում,
և իւր բնակութեան տեղ ընտրեց Երու-
սաղէմը, որի վերին մասը Ախօն կոչուած
լեառը, որ էր անառիկ բերդ, արաւ թագա-
ւորանիստ և փոխադրեց այն տեղ Տապա-
նակ ուխտին: Դաւիթ հնազանդեցրեց
իւր իշխանութեան ներքոյ շրջակայ թըշ-
նամի ազգերը, և երկիրը խաղաղութեան
մէջ էր: «Եա սպանել առւաւ Ուղիա Քե-
տացուն և նորա Քերսարէ կինը առաւ
իւր կին, որիմէն ծնաւ Ողոմնն: «Եա իւր
յանցանքի համար կրեց զանազան թըշ-
ուառութիւնք և գլխաւորապէս իւր որդի
Երիսողոմից հալածանքը: «Եա թէպէտ
ընկնում էր յանցանքի մէջ, բայց մի և
նոյն ժամանակ ապաշխարում էր և էր
ջերմեռանդ առ Աստուած, որի ապացոյցն

է Ապղմոս կոչեցեալ գիրքը: «Եա էր և
մարգարէ, ինչպէս երեսում է Ապղմոսից:
«Եա կամենում էր շինել Աստուածոյ հա-
մար անշարժ տաճար, բայց Աստուած
յայտնեց, թէ արիւնոտ ձեռները չեն կա-
րող շինել այն, և պիտի շինէ նորա որդի
Ողոմննը:

Դաւիթի մահից յետոյ նստաւ Ողոմնն,
որին Աստուած պարգևեց իմաստութիւն:
«Եորա ժամանակ Խորայէլեան թագաւո-
րութիւնը շատ հզօրացաւ, ընդարձակուե-
ցաւ և հարստացաւ: «Եա շինեց Աստու-
ծոյ համար հզօակապ տաճար, ուր փոխա-
դրեց Տապանակ ուխտին: «Եա պսակուել
էր շատ կանանց հետ կռապաշտ ազգերից,
որք ծռեցին նորա սիրտը ճշմարիտ Աս-
տուծումն և շինեց կողյ մեհեաններ: Վա-
սըն որոյ Աստուած պատառեց նորա թա-
գաւորութիւնը նորա մեռնելուց յետոյ:

Ողոմնին յաջորդեց նորա որդին Ոս-
բովամ, և սորա ժամանակ բաժանուեցաւ

թագաւորութիւնը երկու՝ Յուղայէան և
Իսրայէլան։ Ուրուշամ իշխեց երկու ցե-
ղին, և նորա ծառայ Յերոբովամը տասն
ցեղին։

§ 33. Յուղայէան նահաւորութիւն։

Յուղայէան թագաւորութիւնը էր
Դաւթի ցեղեց, թէպէտ փոքր էր, բայց
աւելի պատուաւոր, զի նորա ձեռին էր
Տապանակ ուխտին և տաճարը, և ամե-
նայն Նրէայ պարտական էր ամենայն տա-
րի գնալ Երուսաղէմ և մատուցանել տա-
ճարին իւր նուեկը. իսկ Իսրայէեան թա-
գաւորութիւն էր աւելի բազմամարդ և
ընդարձակ ու զօրաւոր։ Յուղայէան թա-
գաւորութիւնը շարունակեցաւ 375 տա-
րի, և մի դար աւելի քաշեց քան Իսրա-
յէեանը. նորա գահի վերայ նստեցան
քսան թագաւորներ, նոցա մէջ արժանա-
ւորներ և Կստուածապաշտներ էին միայն

վեց անձինք՝ Ասա, Յովսափատ, Ողիա,
Յովաթամ, Խղեկիա և Յովսիա. իսկ
մնացածները անբարոյականներ, աստուած-
ուրացներ, և կռապաշտներ։ Կռաջիննե-
րու թագաւորութիւնը էր աւողական
և նշանաւոր ներքին բարեկարգութեամբ,
Ճշմարիտ աստուածպաշտութեամբ և փա-
ռաւոր յաղթութիւններով արտաքին թշ-
նամեացվերայ, իսկ միւսներունը ըստ մեծի
մասին էր կարծ ժամանակով և անբաղդու-
թեամբ։ Նոցա հեռանալը Ճշմարիտ աստ-
ուածպաշտութենից և ժողովրդի մոլո-
թիւնքը պատճառ եղան Յուղայէան թա-
գաւորութեան ընկնելուն։ Կաբուգողնո-
սոր Բարեկացւոց թագաւորը քանդեց Ե-
րուսաղէմը, յափշտակեց տաճարի սուրբ
անօթները, և Յուղայի ազգը գերի տարաւ
Բարելոն, ուր մնացին 70 տարի։

§ 34. Խաղայէլան Ետագաւորութիւն:

Խորայէլեան թագաւորութիւնը, որի աթոռն էր Ասմարիա, տեսեց 244 տարի: Կորա առաջին թագաւորն էր Յերոբովամ. նա վախենալով՝ թէ կրօնը, որ կապել է նորա հպատակները Խրուսաղէմի հետ, կրկն կը ձդէ նրանցը Յուդայի թագաւորութեան իշխանութեան տակ, վասըն որոյ այս երկիւղը փարատելու համար՝ մտածեց ձգել նոցա մէջ կրօնական բաժանումը, ձուցել տուաւ երկու ոսկէ երինջներ, և զբաւ մէկը Բէ՛նէլ, և միւսը Դան, սահմանեց նոցա համար առանձին տօներ, առանձին քուրմեր, և ասաց ժողովրդին. “ Եհա սոքա են քո աստուածներդ, Խորայէլ, որ քեզ հանեցին Խղիպտոսից,, :

Ժողովուրդը, որ հակամէտ էր զէպի կռապաշտութիւն, նորա մեծ մասը պաշտեցին վերսիշեալ կուռքերը, և Խորա-

յէլեան թագաւորութեան մէջ տարածեցաւ կռապաշտութիւնը, զի նորա 19 թագաւորներու մէջ՝ զտանուեցաւ առաքիւնի և աստուածապաշտ անձը, այլ ամենեքեան հետեւեցան Յերոբովամի օրինակին, և էին կռապաշտաներ ու մոլիք: Սստուածշատ անգամ իւր Ծնտրեալներու ձեռքով, որոց մէջ երեւելի էին Խղիա և Խղիսէ, խրատեց յետ դառնալ չար ճանապարհից, բայց ոչ ոք չդարձաւ, վասն որոյ և մատնեց նրանցը Ասորեստանի Սաղմանասար թագաւորի ձեռը, որ քանդեց Ասմարիայն և ուրիշ քաղաքներ: Խորայէլացիք իւրեանց թագաւոր Ավսիայի հետ գերի գնացին Ասորեստան և բնակուեցան Խփրատի միւս կողմը:

Երկիրը մնաց անբնակ, և Սաղմանասար լցրեց գաղթականներով ուղարկուած Բարելնից, Ասորիներից և Միջաղետքից, որք բնակուեցան Ասմարիայում, և ուրիշ անբնակ քաղաքներում, և երկիրը

անշն լինելու պատճառաւ դարձել էր
բնակարան գաղաններու և առիւծներու,
որք մեծ վնաս էին հասուցանում նորեկ
գաղթականներուն։ “Երբա այս վերագրե-
ցին Խարայէլի Աստուծոյ բարկութեանը,
զոր չեն պաշտում, վասն որոյ խնդրեցին
Սաղմանասարից ուղարկել իւրեանց մօտ
Ճրէից քահանայ, որ ուսուցանէ նոցա
Խարայէլի Աստուծոյ պաշտօնը։ Ուղար-
կուած քահանայն բնակուեցաւ Բեթե-
լում, և ուսուցանում էր թէ ի՞նչպէս
պէտք է ծառայել Ճրէից Աստուծուն և
Ո՞վվսէսի օրէնքներուն։ “Երբա յօժարու-
թեամբ ընդունեցին հաւատը Ճշմարտին
Աստուծոյ վերայ, բայց միւնոյն ժամանակ
խառնեցին նորա հետ և իւրեանց մնա-
պաշտութիւնքը, և ծագեցաւ այն խառն
կրօնը, որ յետոյ կոչեցաւ Աղանդ Սամա-
րացուց։ Ճամանակ անցնելուց յետոյ տա-
ճարը շնուցին Գարիզին սարի վերայ, և
ունէին առանձին քահանայապետ և քա-

հանայ, որք զինքեանս համարում էին
Եհարոնից իջած։

§ 35. Ճրէայ+ Բառէւլնեան իշխանութեան
նէր+այ։

“Եաբուգորոնոսոր տիրելով Ճրէաստա-
նին և գերի տանելով նրանցը ցրուեց Բա-
րելացւոց աշխարհի զանազան կողմերը, և
մեծ բազմութիւն բնակեցրեց Քօթար գե-
տի ափումը։ Այս օտարութեան մէջ և
թշուառ վիճակում՝ նզովում են այն ա-
մենայն իրանց վերայ եկած ապաբազու-
թեանց պատճառները, և սրտի զգացմուն-
քով թափում են արտասուք՝ յիշելով
Երուսաղէմը։

Աստուծած տեսնելով նոցա ջերմմուանդ
ապաշաւը՝ կակլացնում է Կաբուգոդո-
նոսորի սիրտը, որ շատ հեղութեամբ վար-
վում է գերի Ճրէից հետ, թոյլատրում է
համարձակ պաշտել իրանց հաւատը,

գնել հող, ունենալ իւրեանց սովորութեամբ դատաւորներ, և ամենայն դորձերը վճռել իւրեանց հայրենի օրէնքով, և նորանցմէն շատերը ստացան պաշտօններ տէրութեան մէջ : Կաբուզողոնսոր այսափի բարեսրտութեանց հետ, հրամայեց, որ Նրէական երևելի ցեղերից ընտրել ու շիմամիտ տղայք, սնուցանել արքունեաց մէջ, և ուսուցանել Վաղդէական դպրութիւնը, որոց մէջ երևելի գտնուեցան Պանիէլ, Անանիա, Եղարիա և Միսայէլ, և նոցա դրաւ քաղդէական անուններ, Բաղդասար, Աեղրաք, Միսաք և Երեղնազով : Գանիէլ արժանացաւ և Աստուածային յայտնութեան, որ թագաւորի մոռացած երազը ոչ ոք Բարիլոնեան իմաստուններից չկարաց պատմել և մեկնել՝ բաց ի Գանիէլից, մինչեւ որ հեթանոս թագաւորը զարմացած այս իրողութեան վերայ՝ հրապարակաւ դաւանեց թէ՝ “Ճ’ շմարիտ Աստուածը, միմիայն Նրէից Աստուածը,

է, և ոչ այլ ոք, Կա է Տէր աերանց և թագաւոր թագաւորաց,, և Գանիէլկարգեցաւ կառավարիչ Բարիլոնի և զլուխ իմաստունների, իսկ նորա երեք ընկերները՝ նորա օգնական, և այսպէս ստացան Նրէայք իրաւունք համարձակ պաշտելու ծշմարիտ և սուրբ հաւատը :

Աւելի ևս համարձակութիւն գտաւ ծշմարիտ Աստուածպաշտութիւնը հեթանոսական աշխարհում, երբ որ Աեղրաք, Միսաք և Երեղնազով երկրպագութիւն չտալով Կաբուզողոնսորի պատկրին, երբ որ երես առ երես անարգելով նորա հրամանը՝ այս մասին ընկան բորբոքեալ հնոցի մէջ, և նախախնամութիւնը պահեց նրանցը անփառ, մինչեւ որ թագաւորը անձամբ տեսաւ, և նոցա հետ ևս չորրորդ անձը, որ նմանեցրեց Աստուածորդւոյն, ուստի և հրավարտակով և պատժով արգելեց իւր տէրութեան մէջ հայհոյէլ Նրէից Եստուածը : Աւ այսպէս

Հեթանոսական աշխարհի մէջ ձշմարիտ
աստուածալաշտութիւնը բարձր կանգնե-
ցաւ քան դչեթանոսութիւնը։ Արէայք
ախուվախ քաշելով պատառմ էին խոս-
տացեալ Մեսիայի գալուն, և նոյնը քա-
րոզում էին։ Արէից գերութիւնը զլատ-
որապէս պատրաստեց հեթանոսներուն
Մեսիային ընդունելու համար։

§ 36. Տօբիլ և նոր Տոբիլ որդին։

Իսրայէլան թագաւորութիւնը կոր-
ծանուելուց յետոյ Սաղմանասարի ձեռով
Տօբիթ գերի վնաց միւսներու հետ Կի-
նուէ, և ունենալով պատիւ Վսորեստանի
թագաւորի մօտ՝ օգնումէր իւր հայրենա-
կիցներուն, հոգալով նոցապակասութիւն-
քը և թաղելով անտէր մեռածները։ Կա
կուրացաւ մէկ դիպուածով, և այս պատ-
ճառեց նրան զրկուիլ հարսառութենից և
ընկնիլ աղքատութեան միջ։ Տօբիթ ու-

նէր մի որդի Տուրիա անուն և կրթում էր
նրան Աստուածաշտութեան և բարոյա-
կանութեան մէջ, և տուաւ նրան այս խր-
բանները։

,, Կեանքիդ մէջ միշտ յիշէ քո Աստ-
ուածը, պահիր նորա պատուիրանները,
անիրաւութիւն չանես. Եթէ ձշմարտու-
թիւն և արդարութիւն գործես, քո ամե-
նայն բանը յաջող կ'լինին։

,, Ողորմած կաց աղքատներուն, որ
Աստուած էլ քեզ կողորմի. գիտացիր, որ
ողորմութիւնը մահից կը փրկէ։

,, Բարի վարք ունեցիր, և ողջախոհ
եղիր. օտարազգի կին չառնուա և աղջիկ
չտաս նրան, այլ մեր ազգից առ, և
տուր։

,, Մշակի վարձը մօտդ չպահես, այլ
նոյն օրը տաս։

,, Մի անիր ուրիշն այն բանը, ինչ որ
չես ուզում անէ քեզ ուրիշը։

,, Վայնչափ գինի չեմես, որ հարբես

„Քաղցածներուն տուր հաց և տկլորին շոր, և ինչ որ քեզմէն աւելնայ՝ ողորմութիւն տուր:

„Խելօք մարդուն խորհուրդ հաղցրո՞ւ և լն:

Եյս խրատները խորը տպաւորուեցան Տուրիայի սրտի մէջ։ Երանի այն ծնողներուն, որք իւրեանց զաւակները կը կրթեն մատաղ հասակում։

Յեայ Տուրիա հրեշտակի առաջնորդութեամբ գնաց Եկեղաւան քաղաքը իւր ազգականի մօտ, և պսակուեցաւ նորսա աղջկայ վերայ։ Եպա ստանում է իրանց պարտականից տասն տաղանդ արծաթը և վերադառնում է հօր մօտ. և հրեշտակի ցոյց տուած ձկան լեղին, ածում է հօր աչքերի վերայ, և նոյն ժաման բացւում են։ Տուրիա իւր հօր նման լինումէ առաքինի, և ողորմած աղքատներու, և հայրու որդին սուրբ Գրքի մէջ յիշատակութեան տեղ են գտանում։

§ 37. Յուղին:

Ի արելացւոց Հողեփեռնէս զօրավարը պաշարեց Արեից Տետեղուայ ամուր քաղաքը, որի բնակիչները ընկան ահուգողե մէջ։ Եյն քաղաքում բնակւում էր մի այրի կին Յուղիթ անուն, գեղեցիկ երեսով, բարեպաշտ և սրտոտ, քաջալերեց նրանցը՝ փոքր ժամանակ դիմանալ նեղութեան, և Աստուած կազատէ շուտով։ Կա հագաւ հարսնութեան շորերը, և գնաց Հողեփեռնէսի մօտ և ասաց, որ ինքը կարող է գտնել հնարք քաղաքին տիրելու։ Յուղիթի գեղեցկութիւնը խաւ փեց Հողեփեռնէսին, և սիրահարուեցաւ նրան։ Մէկ օր մեծ հրաւեր արաւ, և այն շափ խմեց՝ որ հարբեցաւ, առենեքեանքն գնացին և մնացին միայն երկուսը վրանի մէջ։ Հողեփեռնէս անզգայ պառկած էր անկողնի մէջ, և Յուղիթ տեսնելով որ լաւ ժամանակ է սպանել թշնամուն, ա-

ուաւ նորա թուրը, և ամենայն զօրութեամբ խփեց նրա շնչքին ու կտրեց դլուխը, և դրաւ պարկի մէջ, ու տուաւ իւր նաժիշտին և հեռացաւ գիշերով : Գնաց քաղաքը խնդալով, ցոյց տուաւ քաղաքացւոց թշնամի զօրավարի գլուխը, և միւս առաւօտը յարձակուեցան թշնամեաց վերայ, սկսան կոտորել և հալածել, և այսպէս մէկ տկար կին յաղթեց թշնամեաց, աղատեց իւր հայրենիքը և արժանի եղաւ ունենալ սուրբ Պարքի մէջ իւր անունի յիշատակութիւնը :

§ 38. Արէայ+ Պարտէց Եղիանաւըւէան Նէր+
+ոյ:

Կիւրոս թագաւոր Պարսից տիրեց Իարիլոնին և բոլոր Վրեւելքին, և կատարեցաւ Երեմիայի գուշակութիւնը Արէից աղատութեան վերայ եօթանասնամեայ գերութենից յետոյ: Կա իւր թագաւո-

րութեան առաջին տարին հրաման հանեց իւր տէրութեան մէջ, որ Վասուած տալրվ նրան երկրի թագաւորութիւնը, հրամայել է նրան շինել Երուսաղէմի տաճարը. վասն որոյ արձակեց բոլոր Արէայ գերիքը գնալ իւրեանց հայրենիքը, իսկ տեղական բնակիչներուն, որոց մէջ գտանւում էին Արէայք, հրամայեց օգնել նոցա, որչափ կարող են: Վյժամանակ լրացաւ 70 տարին: Կիւրոս տուաւ նոցա շատ անօթներ պատկանած Երուսաղէմի տաճարին: Արէայք Օօրաբարէլի (որ Պաւթիցեղեց էր) առաջնորդութեամբ և Յեսու քահանայապետի, շարունակեցին իւրեանց ճանապարհը գէպ ի Երուսաղէմ 42 հաղարից աւելի տղամարդ, թող ծառայքը: Կակ Պանիէլ մնաց Իարիլոնում և չտեսաւ իւր հայրենիքը, բայց տեսաւ տեսիլքի մէջ աստուածային քաղաքի վեճակը մինչև Քրիստոս:

Յեսու և Օօրաբարիլ շինեցին զոհա-
դործութեան սեղանը, ապա ձգեցին տա-
ճարի հիմը մեծ հանդիսով: Այմարացիք
առաջարկեցին Արէից ընդունել և իւր-
եանց օգնութիւնը, բայց ստացան բացա-
սութիւն, ուստի ամենակերպ ջանք դործ-
դրին խափանել շինութիւնը, սակայն նո-
քա շինեցին տաճարը, Ենդէաս և Մաղա-
քիսս մարդարէից յորդորանքով, իսկ
Արէունիւն «Քե՞ց խորանը մնաց դատարկ
Տապանակի անհետանալու պատճառաւ:

Աիւրոսի յաջորդներից Երտաշէս թա-
գաւորը խնամք ունէր Արէից վերայ. նա
հրաման տուաւ Երուսաղէմ նոցա-
ցանկութեան համաձայն, և դարձրեց տա-
ճարի մնացած անօթները՝ որ յափշտա-
կել էր «Աարուղողնոսոր, և հրաման՝ ըս-
տանալու գանձապահներից յայնկոյս Եփ-
րատայ գանձը տաճարի հարկաւորութեան
համար: Ատացաւ նոյնպէս թագաւորից

իրաւունք. վերահասու լինելու օրէնքի
պահպանութեան վերայ, պատժել օրի-
նազանցները, կարգել վերակացուք և դա-
տաւորներ բարեկարգութեան: Եզրաս
1700 Արէաներով վերադարձաւ Երու-
սաղէմ, ժողովից Արէայքը և համոզեց
նրանցը արձակել հեթանոս կանայքը, և
բոլորովին կտրել նոցա հետ ամենայն հա-
զորդակցութիւնքը, որպէս զե չշարժի
աստուածային բարկութիւնը իւրեանց
վերայ:

Երուսաղէմի պարիսպը քանդուած էր,
և չէր ապահով շրջակայ թշնամիներից:
«Եէմի անուն Արէայն, որ Երտաշէսի սի-
րելի պալատականն էր, առաւ թագաւորից
հրաման շինելու պարիսպը, և հրովարտակ
տեղական կառավարիներու վերայ տալ
թագաւորական անտառից փայտ: «Եէմի
գալով Երուսաղէմ՝ յաղթեց ամենայն
դժուարութեանց և շինեց պարիսպը 52
օրում:

§ 39, Եսթեր:

Աստուած՝ իւր ընտրեալները չե թողում ձեռից, թէե յանցանքի համար պատճումէ, բայց յարուցանումէ պաշտպաններ, որպէս Եսթերը գերութեան ժամանակ: “Աս էր Արտաշէսի պալատական ծառայի Առուրթքէ անուն Հրէի ազգական, կրթուած Շմարիտ Աստուածպաշտութեան մէջ. և էր երեսօք և հասկով գեղեցիկ. և բաղդը այնպէս բերեց, որ նա դարձաւ Արտաշէսի կին Առուրթքէի հնարքով”:

Համան առաջին նախարարը սաստիկ առում էր Առուրթքէին իրան երկրպագութիւն չտալու համար, և հրաման հանց թագաւորից սպանել բոլոր Հրէայքը, որ նորա թագաւորութեան մէջ կան, որպէս կասկածաւոր և ապստամբ ազգ, որպէս զե և Առուրթքէ նոցա հետ սպանուի, ուստի և պատրաստեց կախաղան նորա

համար. բայց նախախնամութիւնը պյուտեսակ փոխեց այդ բանը: Եսթեր թագուհին Առուրթքէի խրատ տալով հրաւիրեց թագաւորին և Համանին իւր մօտ ձաշի երեք անգամ, և վերջին անգամին յայտնեց Արտաշէսին Համանի դաւաճանութիւնը դէպի ի ինքը և իւր ազգը: Թագաւորը բարկացաւ Համանի վերայ, և հրամայեց կախել նրան իւր պատրաստած կախաղանիցը, և հրովարտակով յետ առաւ առաջին տուած հրամանը սպանութեան համար: Եսթեր և Առուրթքէ այս մեծ դիպուածի յիշատակը պահելու համար կարգեցին Փուլքէ կամ Վեճակ ասացեալ տօնը, որ Հրէայք կատարում են և այժմ:

§ 40, Ճառանակ Առաջեւնուական իշխանութեան:

Երբ որ Աղեքսանդր Ամեկոնացին տիրեց Պարսից, գնաց Երուսաղէմի վե-

բայ, այն ժամանակ Յաղոս քահանայապետը հադաւ քահանայապետական զգեստը, իսկ քահանայք և Պետացիք սպիտակ զգեստներ, և այսպիսի հանդիսով դնաց աշխարհակալի առաջ: Եղէքսանդր բոլորովին փոխուեցաւ այս տեսարանով, իջաւ երիվարից և երկրպագութիւն տըւաւ Աստուծոյ, որի անունը զրած էր քահանայապետական խոյրի վերայ, և ասաց իւր մեծամեծներուն, թէ նա այսպիսի անձը տեսաւ Մակեդոնիայում տեսիլքի մէջ, որ խոստացաւ նրան յաղթութիւն Պալսից վերայ: Յետոյ խաղաղութեամբ մտաւ Երուսաղէմ, զոհեց Աստուծոյ տաճարում, քահանայապետը կարդաց Դանիէլ մարգարէութիւնը նորա տիրապետութեան վերայ: Եղէքսանդրը հրաման տուաւ Արէից հաստատ պահել հայրենի օրէնքը և Աստուծածպաշտութիւնը: Սամարացիք նորա հրամանով շնորհին առանձին տաճար Պարիզին

լեռան վերայ, և կարգեցին առանձին քահանայապետ և քահանայք:

Եղէքսանդրի մահից յետոյ Եղիպատացւոց Պաղոմէոս թագաւորը տիրեց Պաղեստինային և մինչև 100,000 Արէայ և Սամարացի գերի տարաւ Եղիպատոս, ուր մեացին 100 տարի, և խաղաղ կեանք էին վարում:

§ 41. Թարգմանութիւն Աստուծաշնչի:

Եղիպատացւոց թագաւոր Պաղոմէոս Փիղադեղփոսի ժամանակ թարգմանեցաւ սուրբ Գիրքը Երբայականից. Յունարէն, որ կոչւում է Ենանանից Եարգմանութիւն: Պաղոմէոս յանկանալով հարստացնել Եղէքսանդրիայի զրատունը՝ զրքեր ժողովեց ամենայն տեղերից, և կամենալով ունենալ Արէից օրէնքի զիրքը, դեսպան ուղարկեց Եղիպատար քահանայապետի մօտ և ընծաներ տաճարի համար: Եղիպատ

ժողովից Խորայէլեան տասներկու ցեղերից
վեց վեց մարդ, որք քաջ գիտէին Յունա-
կան լեզուն, և յանձնելով նոցա սուրբ
Գիբրը՝ ուղարկեց Եղիպտոս:

Պաղոմէոս սիրով ընկալաւ նրանցը և
թարգմանելու տեղը նշանակեց Փորոս
կղզին, ուր 72 աւուր մէջ թարգմանեցին
Յունարէն, և կարդացին Եղիպտոսում
եղած Արէից առջև, զոր ամենեքեան հա-
ւանեցին, և դրաւ գրատան մէջ: Այս ըն-
տիր թարգմանութենից է թարգմանած
Հայէրէն Աստուածաշոնչը սուրբ Առհա-
կի ձեռով և նորա աշակերտներու օդնա-
կանութեամբ:

§ 42. Հայութան+ Արէից Ալբայ, — Առկա-
բայէցէ+:

Արէայք Աելեկիացւոց իշխանութեան
ներքոյ ունեցան փոքր ժամանակ խաղա-
ղութիւն, բայց Անտիոքոս Եղիպտան, այր

անօրէն և արծաթասէր, մեծ հալածանք
վերկայրեց նոցա վերայ. կողոպտեց Երու-
սաղէմը, այրեց լաւ շինութիւնքը, քան-
դեց պարիսպները, ստիպեց ընդունել հե-
թանոսութիւնը, դրաւ տաճարում Արա-
մազդի արձանը, արգելեց Աստուածապաշ-
տութիւնը, օրէնքները, ծէսերը, և շատե-
րուն սպանել տուաւ: Այս հալածանքի
ժամանակ նահատակութեաւ դառն տան-
ջանքներով Եղիազար քահանայ 90 տա-
րեկան ուսեալ և առաքինի անձը, և Շա-
մունէ կին եօթն որդիներով խողե միս
չուտելու համար:

Աստուած, որ միշտ պաշտպանում է
իւր Եկեղեցին, չթողեց բոլորովին ընկնիւ
այլ յարուցանում է Ամատաթիայ քա-
հանային, Ամակաբայէան տան աղջապե-
տին, որ վառուած օրէնքի նախանձով՝
քանդում է կուռքի սեղանը, սպանում է
նորա վերայ խունկ ծխող Արէային,
ձայն է տալի ժողովրդեան, «Ո՞վ որ օրէն-

քի պահպանողէ՝ իմ ետևից գայ, : Ճառ-
զովեցան շատերը և գնացին սարը, Ասոր-
ւոց զօրքը հասաւ նոցա ետևից շաբաթ-
օրը, և սպանեցին 1000 մարդ, որովհե-
տեւ Նըրէայք այն օրը չպատերազմեցան, և
Մատաթիա վճռեց որ շաբաթ օրը ևս
պատերազմեն: Ճառովից կրկին զօրք և
յաղթեց թշնամեաց, քանդեց կռատու-
ները, թլփատեց երեխայքը, վերականդ-
նեց օրէնքը և հայրենեաց ազատութիւնը:
Հուտ վախճանը թէպէտ կտրեց նորա
յառաջաղիւմութիւնքը, բայց նորա հինդ
որդիքը՝ Յովհաննէս, Հմաւօն, Յուդայ
Մակարէ, Եղիազար և Յովհաթան կանդ-
նեցան նորա տեղը և մինչեւ ի մահ պաշտ-
պանեցին ազդը և կրօնը:

§ 43. Յուդայ Մակարէի և նորա եղիւ-
ներու ժամանենիւն:

Յուդայ Մակարէ իւր հօր մահից յե-
տոյ եղաւ կամաւոր զօրքի գլուխ: «Եա ան-

երկիւղ պատերազմեցաւ թշնամեաց հետ,
սակաւաթիւ զօրքով յաղթեց Ասորւոց
Պաղոմէսու Նիկանովին և Գիորգի զօրա-
վարներուն:

Յնտիոքոս Եպիփան լսելով իւր Լիւ-
սիաս զօրավարի յաղթութիւնը Յուդայ Մա-
կարէից, մեծ զօրքով գնաց Նըրէայ վերայ
բոլորովին ջնջել. բայց Աստուծոյ պատի-
ժը շուտ հասաւ նրան ձանապարհի վերսց
և որդնալից սատակեցաւ: Յնտիոքոսի մա-
հից յետոյ պատերազմը շարունակւում էր
Ասորւոց և Նըրէից մէջ. Յուդայ միշտ
յաղթում էր, բայց մէկ անգամ 800 մար-
դով պատահեցաւ 22000 Ասորի ընտիր
զօրքին, աներկիւղ պատերազմեցաւ, և մե-
ծամեծ քաջութիւն անելուց յետոյ սպան-
ուեցաւ:

«Երան յաջորդեցին Յովհաթան և Ըլ-
մաւօն եղբայրները: Յովհաթան մեծ օ-
գուտ քաղեց Ասորւոց թագաւորութեան
մէջ ընկած խոռվութենից, և ցուցանե-

լով Գեմետը թագաւորին օգնութիւն
թշնամեաց դէմ՝ ստացաւ քահանայա-
պետութիւնը, իսկ Անտիքոս Եից ծիրա-
նի և թագաւորական նշան, բայց Տրիփոն
բռնեց նրան նենդութեամբ ու սպանեց:
Կորա տեղը բռնեց Շմաւօն եղբայրը, որ
խլեց Ասորւոց ձեռքից Ախօն լեառը, և
ստիպեց նրանցը ճանաչել Արէից ազգի
անկախութիւնը: Շմաւօն ընդարձակեց
և ամրացրեց հայրենեաց սահմանները,
դրաւ դաշը Առօմայեցւոց և Ապարտա-
ցւոց հետ, և նորա կառավարութեան ժա-
մանակ Արէայք վայելում էին ամենատե-
սակ խաղաղութիւն: Կորա որդին Յով-
հաննէս, մականուանեալ Հիւրկանոս,
այսինքն թշնամեաց քանդող, նուածեց
Գալիլիայն, Ասմարիայն և Խղոմայեցի-
քըն, ստիպեցին նրանցը ընդունել Վով-
սիսական օրէնքը, և քանդեց Գարիզինի
տաճարը:

§ 44. Ճամանակ Առօմայեական իշխանութեան:

Հիւրկանոսի թոռները Հիւրկանոս Ա.
և Արիստարուղոս Ա. վիճելով միմեանց
հետ ծայրագոյն իշխանութիւնը խելու-
իրարու ձեռքից՝ դիմեցին Առօմայեցւոց
Պոմպէոս զօրավարին՝ խնդրելով նորա օդ-
նութիւնը: Պոմպէոս մտաւ զօրքով Ե-
րուսաղէմ, և Արէաստանը շինեց Առօմ-
ական նահանգ: Հիւրկանոսին տուաւ քա-
հանայապետութիւնը առանց թագաւո-
րական իշխանութեան, իսկ Արիստորողոս
և նորա որդիքը շղթայակապ ուղարկուե-
ցան Առօմ:

Պակաբայեցւոց ազգի ընկնելով՝ բարձ-
րացաւ Աերովդէսի ցեղը: Աերովդէսի
հայրն էր Անթիպատրոս, ազգով Խղոմա-
յեցի, իսկ հաւատով Արէայ, որ իւր ցոյց
տուած ծառայութեան համար Խղիպտո-
սում Յուլիոս Կեսարին՝ ստացաւ Առօմի-
մէական քաղաքացութիւն և բդեշխու-

թիւն Նըրէից վերայ: «Եորա մահից յետոյ
նորա որդին Ներովդէս կարգուեցաւ Նոռ-
մի սենատից Նըրէաստանի թագաւոր: «Եո-
րա 34 տարուայ թագաւորութեան պատ-
մութիւնը լի է ահարկու չարագործու-
թիւններով: Իւր իշխանութիւնը անկաս-
կած պահելու համար գործ զրաւ սպա-
նութիւն: «Եա չենայեց ոչ ժողովրդին
և ոչ ազգականներուն, խեղդել տուաւ իւր
աներորդի Արիստոբուղոսին, որին ինքն
էր կարգել քահանայապետ. սպանել տը-
ւաւ իւր հարազատ քրոջ մարդուն,
յետոյ իւր զօքանչին և կին Ամրիամին,
որ Աակաբայեցւոց վերջին ժառանգն էր,
և իւր երկու որդիքը ծնած նրամէն: Ապա
ուեսներով թէ ժողովուրդը ատում է ի-
րան, և գուցէ ապստամբութիւն ծագուի,
ուստի խաղաղցնելու համար ամենքին՝
վերանորոգեց Օօրաբարելեան տաճարը
շատ փառաւոր շնորիվ: «Եորա թագաւո-
րութեան վերջին տարին ծնաւ խոստա-

ցեալ Մեսիայն հեթանոսաց ակնկալութիւ-
նը 5199 թուին Եօթանասնից հաշուով
և 4000 թուին Նըրէից կամ ժամանակա-
դրաց հաշուով աշխարհի ստեղծելուց:



Ա. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՈՒԽՏԻ ԵԿԵԳԻՑԻՑ:

§ 45. ՅՈՒՆԻԴ ՅԱՀԱՆԱԿ ՄԱՐԴԻ:

Երուսաղէմի երկրորդ տաճարի քահանայից մէջ կար մէկը Օաքարիա անունով, և նորա կնոջ անունն էր Եղիսաբէթ, երկուսն էլ առաքինիք և արդարներ, բայց ծերացած էին և որդի չունէին:

Մէկ օր Օաքարիա մտաւ տաճարը խնկարկութեան համար, և երևեցաւ նրան Վստուծոյ հրեշտակը աւետելով Յովհաննէսի ծնունդը. բայց Օաքարիա չհաւատալով հրեշտակի խօսքին՝ համրացաւ մինչեւ որդու ծնունդը, ու յետոյ բացուեցաւ լեզուն: Յովհաննէս բնակւում էր անապատում, և ապա Վստուծոյ հրամանով գնաց Յորդանան և քարոզում էր փրկու-

թեան ասլաշխարութիւն, մղտում էր
մեղքերը խոստովանողներուն, և աւե-
տում էր թէ Աստուծոյ արքայութիւնը
մերձեցել է, այսինքն է Մեսիայի գա-
լուստը:

§ 46. Առաջ Կոյս Մարդարկ առեւտելը:

Գալրիել հրեշտակը Աստուծոյ հրա-
մանով եկաւ Գալիեայի Նազարեթ քա-
ղաքը Մարիամ Կուսի մօտ, որ Գաւթի
տանիցն էր և Յովեկի հետ նշանուած,
որին աւետեց Մեսիայի ծնունդը. թէպէտ
Մարիամ շփոթուեցաւ այն խօսքի վերայ,
բայց հրեշտակը երբ որ ասաց՝ “ Առզին
սուրբ գայ քո մէջ”,՝ հնազանդեցաւ, և
նոյն ժամին յղացաւ. Յովեկի տեսնելով
նրան յղի, ընկաւ կասկածի մէջ, սակայն
Տիրոջ հրեշտակը տեսլեան մէջ ասաց՝ թէ
նա յղացած է Առզւով սրբով, և երե-
խայի անունը դնէ Յիսուս, որ կը թարգ-
մանի Փրկիւլ:

§ 47. Փրկիւլ ՅՈՆԻՆԻԴՐ:

Եյս ժամանակ Արէայք լինելով Առո-
մէական իշխանութեան ներբոյ, Օգոստոս
կայսր Հրամայեց աշխարհագիր անել իւր
թագաւորութեան մէջ: Յովսէփ գնաց
Մարիամի հետ իւր հայրենի Ռեգղեհէմ
քաղաքը գրուելու աշխարհագիր մէջ. և
Մարիամի ծնելու ժամանակը հասաւ, ու
ծնաւ Յիսուսին, և պատեց խանձարուրի
մէջ, և դրաւ մսրումը, որովհետեւ կենա-
լու տուն չկար: Յիսուսի ՅՈՆԻՆԻԴԵԱՆ ժա-
մանակ Արէից թագաւորին էր Աերովդէս:

§ 48. ԱՌԵՆԵՐԻՆ ԵՐԿՐՈՊԱԳԻՆԻՆԸ:

Յիսուսի ծննդեան գիշերին Աստուծոյ
հրեշտակը երևեցաւ հովիւներուն՝ որ զի-
շերով պահում էին իւրեանց հօտը, և
աւետեց նոցա Փրկչի ՅՈՆԻՆԴՐ, նշան
տալով նրանց դտանել մանուկը խանձա-

ըուրի մէջ պատած և մարումը դրած։ Առ-
վելները տեսան և հրեշտակներու բազ-
մութիւն, որք օրհնում էին զլսառած
և ասումէին։ “Փառք ի բարձունս Աս-
տուծոյ, և յերկիր խաղաղութիւն ի մար-
դիկ հաճութիւն,,,: Երբ որ հրեշտակնե-
րը վերացան, գնացին հովիւները Բեղդե-
հէմ, և գտան մանուկը, ու երկրպագու-
թիւն տուին։

§ 49. Յիսուս-է Ռիտարո-նիւնը։

Յիսուսի Ծննդեան ուժ օրից յետոյ
կատարեցին հին օրէնքը թղփատելով մա-
նուկը, և անուն դրին Յիսուս, ինչպէս
հրեշտակը պատուիլէլ էր Յովսէփին տես-
լեան մէջ։

§ 50. Տէտէնը Դաւիթ։

Քառասուն աւուր վերայ ծնուելուց
յետոյ, Մարիամ և Յովսէփ տարան Յի-

սուսին տաճարը, ուր Աիմիօն արդար Ճե-
րունին, որին հրեշտակն ամել էր չմեռնիլ
մինչեւ որ տեսնէ օծեալ Տիրոջը, Ճոգույն
Արքոյ ազգեցութեամբ եկաւ տաճարը,
առաւ մանուկը գրկի մէջ, օրհնեց նրան,
և խնդրում էր կեանքից արձակումը։

§ 51. Վրիտառուի Քարիւլը Երդիպառ։

Յիսուսի Ծննդեան ժամանակ Երկեց-
յաւ մի անսովոր աստղ արևելքում, որ
տեսնելով մոգերը, իմացան թէ Փրկիչ է
ծնել, և եկան Երուսաղէմ, ու այն տե-
ղից գնացին Բեղդեհէմ երկրպագանել
նրան։ Ճերովդէս իմանալով մոգերից
նոր թագաւորի Ծնունդը, խռովեցաւ,
կասկածելով մի գուցէ զօրանայ մանուկը
և խէնորա թագաւորութիւնը. Հրամա-
յեց կրտորել Բեղլեհէմի գաւառի երե-
խայքը երկու տարեկանից ցածր, կարծե-
լով թէ Յիսուսն էլ նոցա հետ կապան-

ուի. սակայն Յովսէփի, Տրեշտակի խօսքով,
առաւ Մարիամին և մանուկը ու փախաւ
Եղիպտոս, ուր մնաց մինչև Հերովդէսի
մահը, և յետոյ դարձաւ Գայլիլեայ:

§ 52. Յէսուսի Միտու-նի-նը:

Յիսուս երեսուն տարեկան մլրտուեցաւ Յօհաննէսից Յորդանան գետում: Եյդ ժամանակ բացուեցաւ երկինքը, և ողին Սուրբ աղաւնու նման իջաւ երկնքից, և Հայրն Սստուած վկացեց վերելից՝ “Դա է իմ սիրելի որդին, Որին Ես հաճեցայ,,,: Սորամով յայտնուեցաւ Երրորդութեան ծածկեալ խորհուրդը:

§ 53. Աստանայէց էռջունիւլ:

Մկրտութենից յետոյ Հոգին տարաւ Յիսուսին անտապատ սատանայից փորձուելու, ուր մնաց ծոմ քառասուն օր և

զիշեր, և յետոյ քաղցեցաւ: Աստանայն աշխատեց զանազան հնարներով խարելնրան, մօտ տարաւ քարերը, որ հաց շենէ, կանգնեցրեց քաղաքի աշտարակի վերայ, որ իրան ցած դցէ: տարաւ սարի գլուխը, ցոյց տոււաւ աշխարհի թագաւորութիւնը, և խոստացաւ տալնրան եթէ երկրպագութիւն կուտայ իրան: բայց ամենայն բանի մեջ խայտառակեցաւ սատանայն, և հրեշտակները մօտացան ու պաշտեցին Յիսուսին:

§ 54. Քէնապասի +արուպ-նւան առաջնորդն պարբէն:

Երբոր Քրիստոս դարձաւ անտապատից գէպ ի Յորդանան, ժողովեց աշակերտներ և իւր հետ տարաւ Գայլիլեայի կողմերը, և Կանա քաղաքումը հրաւիրուած լինելով հարսանիքում՝ արաւ առաջին հըրաշքը՝ ջուրը փոխելով դինի: Յետոյ ըս-

կսաւ քարոզել ապաշխարութիւն և ար-
քայութիւն: Օատկի տօնին գնաց Յիսուս Երո-
սաղէմ, և տեսաւ որ Աստուծոյ տաճա-
րին պատշաճաւոր յարդանք չէին տալի,
այլ եկեղեցին դարձելէր առուտառութի տեղ,
և շինեց թոկից խարազան, և բողոքին էլ
դուրս արաւ տաճարից: Եւյս ժամանա-
կում շատերը այն կողմի բնակիչներից հա-
ւատացին նրան, որոցմէն “Եիկողիմոս Ար-
քից իշխանը, գիշերով եկաւ Յիսուսի
մօտ երկնքի արքայութեան վերայ խօսե-
լու համար: Վպա Յիսուս շրջեցաւ աշա-
կերտներու հետ Յուդայի զանազան կող-
մերը, քարոզելով ամենայն տեղ: Զմեռը
կրկին գնաց Գալելիայ, և ճանապարհի
վերայ խօսեցաւ Ամարացի կնոջ հետ
եկած Մեսիայի վերայ, որով շատացան
հաւատացեալները, և ընդհակառակն Աա-
զարէթի բնակիչները, փոխանակ ուղղելու
իրանցը նորա քարոզութեամբ, մտածե-

ցին վնասել նորա կեանքը: Յիսուս գնաց
Կափառնայում, ուր բժշկեց հարիւրա-
պետի որդին, և Գալելիայում մի բորոտ
անդամալոյց, որոց համբաւը հոչակուե-
ցաւ ամեն տեղ, բայց Փարիսեցիք նա-
խանձուելով նրա հետ՝ խօսում էին և
մտածում էին չարութիւնք նորա վերայ:

§ 55. Քարոզութեան և հիմուն առարկի:

Յիսուս՝ քարոզութեան երկրորդ տա-
րին կրկին գնաց Երուսաղէմ, ուր բժշ-
կեց երեսուն և ութ տարուայ անդամա-
լոյցը Պրոպատիկէ աւազանի սրահումը:
Եւտոյ դարձաւ Գալելիայ, և շաբաթ-
օրը ուսուցանում էր ժողովրդին Կափառ-
նայումի մէջ ու բժշկեց մէկ մարդոյ գոսա-
ցեալ ձեռը, ցայց տալով Փարիսեցւոց,
թէ բարի գործերը թոյլարուած է և շա-
բաթ օրերումն էլ գործելը և Փարիսեցի-
քըն ու կարդացողները այնչափ զայրացան,

մինչև որ կամենում էին սպանել այլ Յիսուս Հեռացաւ մօտիկ սարի վերայ ժողով վրդեան բազմութեան հետ։ Այն տեղ աղօթքի կանգնեցաւ և ընտրեց տասներկու աշակերտներ առաքելական պաշտօնի համար։ Արից ցած գալով բժշկեց հեւանդերուն, և խօսում էր աշակերտներու և ժողովրդեան հետ Անաց Շանը։

Յիսուս կը ին դարձաւ Արքանայում, ուր բժշկեց հարիւրապետի ծառային, իսկ Այբն քաղաքում յարութիւն տըւաւ մի աղքատ այրի կնոջ մեռած որ գունի։ Աղա շըջում էր ամենայն կողմերը և քարոզամ էր Աւտարանիք Քարոզութենից և զանազան հրաշներից յետոյ Յիսուս մտաւ նաւի մէջ կամենալով անցնել միւս կողմը Պալելիայ ծովակին։ և երբ որ քնած էր նաւի վերայ, վերկացաւ սաստիկ քամի, որ ամենքը վախեցան, և աշակերտները զարթեցրին նրանց խնդրելով օգնութիւն։ Յիսուս վերկացաւ հրա-

մայեց քամուն և հանդարտուեցաւ։ և դուքս գնալով ցամաքի վերայ մտաւ Գերգեսանցւոց երկիրը, բժշկեց դիւահարներուն, յարութիւն տուաւ Յայրոս ժողովրդապետի մեռած աղջկան, բժշկեց երկու կոյրեր, որք նորա ետևից գնացին Արագարիթի Ճանապարհի վերայ։ օգնեց ամենքին ինչ որ ուղում էին, ոչ մէկ նեղացածին բացասութիւն չարաւ, այլ ամենքին ցուցանում էր կարեկցութիւն։ Երջելով Գալիլիացւոց քազաքները ուղարկեց տասներկու աշակերտները զանազան տեղեր քարոզել Աւետարանը, բժշկել հիւանգները և լուսաւ եկան Յիսուսի մօտ Պատերից առաջ։ Այս ժամանակումը Յովհաննէս Ակրտիչ զիսատուեցաւ բանտի մէջ և երովգեսի հրամանով։

Այս ժամանակ Յիսուս ժողներով և բովածինի երկիրը կաւ Աւթասպիդա անապատը, ուր հինգ հացով և երկու ձինով

կերակրեց հինգ հազար հոգի, և հացի
կառաւանքը ժողովեցին տասներկու քթո-
ցի մէջ։ Եյս ժամանակին աշակերտներից
մի քանիսը թողին նրան, ել հետը չինա-
ցին. որովհետև յայտնեց նրանց, թէ նո-
քա կստանան նորամէն ոչ թէ ժամանա-
կաւոր, այլ յաւիտենական և երկնային
բարութիւնքը։ Եռաքեազները յայտնեցին
իւրեանց հաստատ հաւատը նորա վերայ,
և Յիսուս առաջին անդամ յայտնեց նը-
րանցը, թէ նրանցմէն մէկը է ապստամբ ու
նրան կը մատնէ։

§ 56. «Քարոզութեան երրորդ առընթեան»։

«Քարոզութեան երրորդ առընթեան» Յիսուս
Պատեքի ժամանակ Խրուսաղէմումը չէր,
այլ գնաց Տիւրոսի և Ոիդոնի ծովի ափը.
և մէկ «Քանանայի կին դուրս դալով իւր
քնակութենից Քրիստոսի առաջ՝ Խրոնի-
քում էր բժշկել իւր աղջեկը հիւանդու-

թենից։ Յիսուս լսելով նորա աղաղակը և
տեսնելով նորա հաւատը՝ ասաց. կի՞ն դու,
մեծ է քո հաւատը, լինի քեզ ինչպէս որ
կամենում ես, և կինը գնալով իւր առան՝
աեւսաւ աղջկանը բժշկուած։ Յետոյ Գա-
լիլիայի ծովի ափերում եղած քաղաքնե-
րի մէջ բժշկեց շատ հիւանդներ, կաղեր,
կոյրեր և խուլեր։ Եյս աեղ եօթը հա-
ցով և մի քանի ձկնով կերակրեց չորս
հազար հոգի՝ բաց ի կանայքներից և երե-
խաներից։ Տեխտպայիդում կուրին լուսա-
ւորեց, Փիլիպպեայի Ակսարիա քաղա-
քում կրկին յայտնեց աշակերտներուն
իւր համար, թէ մարդկային ազգը եկել է
փրկելու՝ առաջադրյն պատմելով իւր չարէ
չարանքը, մահը և յարութիւնը։

§ 57. «Քրիստոսի Պայծառակիւրունիւնը»։

Ա եց օրից յետոյ Յիսուս վեր առաւ-
իւր հետ Պետրոսին, Յակոբոսին և Յով-
հաննէսին, ու տարաւ Ծաբօր սարի զլու-

խը, ուր ցոյց տուաւ նրանց իւր Եսաուաւ
ծութեան. վառքը, և երկեցան նրան
Առզէս և Եղիա որ խօսում էին այն ա-
մենայն անցքի վերայ, որ պիտի պատա-
հեին Յիսուսի հետ Երուսաղէմում. և
ահա ամպը հովանի եղաւ նոյա, ամպից
լուեցաւ ձայն. “Դա է իմ սիրելի Որ-
դին. Դրան լսեցէք, : Երբ որ ապրից
իջան, կրկին պատմեց աշակերտներուն իւր
չարչանքը և մահը: Կափառնայումքա-
ղաքումտուաւ նորամէն պահանջած հար-
կը, և յանդիմանեց աշակերտներուն, որ
վիճում էին մեծութեան վերայ: Երբոր ե-
կաւ Յիսուստաճարը, սկսաւ քարողելտա-
ճարումը, բարկանումէին Հրէայքը, և ու-
զում էին բռնել բայց ‘Նիկոդիմոս չթո-
ղեց. միւս օրը կամենում էին քարկոծել,
բայց նա ծածուկ դուրս գնաց տաճարից,
և անյնելով Ասմարիայն՝ ընտրեց 70 ա-
շակերտներ, և ուղարկեց զանազան քա-
ղաքներ, և եւտարանը քարողելու համար:

Ինչ ժամանակ Պատեքի չորրորդ օրը
մօտ կացաւ Յիսուս գնաց Երուսաղէմ,
և մտաւ մէկ Փարիսեցի իշխանի տուն շա-
բաթ օրը, ուր բժկեց ջրգոյեալին: Եյս
Ճանապարհորդութեան մէջ բժկեց տասն
բորոտներ, և թեթանիայում յարութիւն
տուաւ չորս օրուայ մեռած Ղաղարոսին.
այս հրաշքով շատերուն ձգեց իւր կողմը,
որի պատճառաւ Հրէայքը աւելի ևս կա-
տաղեցան և Ճանապարհը պահեցին ծա-
ծուկ, որ սպանեն. և որովհետեւ դեռ չեր
հասել ժամանակը, ուստի և ոչ ոք ձեռք
տուաւ նրան, և Յիսուս գնաց Ափրայիմ,
և այս տեղեց դառնալու ժամանակ կուրի
աչքը բայց արաւ Երիքովում, և մտաւ
Օտքէսու մաքսաւորի տունը:

§ 58. Երուսաղէմ Տանելը հանդէսով:

Յիսուս մարդարէից դուշակութիւնքը
կատարելու համար նստեցաւ իշխ վերայ,

և Երուսաղէմ մտնելու ժամանակ դղքդեցաւ բոլոր քաղաքը, և բաղմութիւնը գընաց նորա առաջ՝ աղաղակելով, “Ովսաննա Դաւթի որդուն, օրհնեալ որ գալիս ես Աստուծու անունով, Ովսաննա ի բարձունս,, . ոմանք իրանց շորերը փռում էին և ոմանք ծառի ճիւղերը կտրատում էին և մատուցանում էին նրան. յետոյ մտնելով տաճարը՝ դուրս արաւ բողքը առուտուր անողներուն, և այն երեկոյն գընաց Բնիթանիա:

§ 59. Խորհրդական ընթիւ:

Քաղաքակերաց տօնի առաջին օրը Յիսուս իւր աշակերտներու հետ գնաց մէկ վերնատուն, ուր պատրաստած էր Օատիկը. երբ որ նստեցան սեղան՝ սկսաւ միմիթարել և քարոզել նոցա, պատմել ամենայն անցքը, որ պիտի կրեր այն օրերումը. յայտնեց, որ Յուդան է մատնիչը,

լուաց ամենքի ոտները, տալով հեղութեան և սէրի օրինակ. և իւր ապագայ յիշատակի համար առաւ հաց՝ օրհնեց, կոտորեց և տուաւ աշակերտներուն ասելով. “Եռէք, կերէք, այս է իմ մարմինը, . ապա առաւ գինու բաժակը՝ ասաց, “Երբէք (խմեցէք) սրանից, այս է իմ արիւնը նոր ուխտի. և այս արէք իմ յիշատակի համար, : Բնիթրիքը աւարտելուց յետոյ գնացին Զիթենեաց սարը:

§ 60. Մատուցելին:

Յուդայ՝ որ խոստացել էր քահանայապետներուն մատնել Յիսուսին նոցա ձեռքը երեսուն արծաթով, գիշերուայ մէջ մեծ բաղմութեամբ եկաւ Յիսուսի մօտ, երբնաւ աղօթում էր Գաեթսեմանի պարափում, և համբուրեց նրան՝ ասելով. ողջեր Վարդապետ. որովհետեւ մատնութեան նշան համբոյին էր առւել. և նպա

բռնեցին ու տարան քահանայապետի մօտ.
իսկ աշակերտները թղղին նրան և փախան,
միայն ՊԵտրոս հեռուանց գնում էր ետե-
փց: Նըրբոր տարան քահանայապետի մօտ,
թէ և Նըրբոր սաստիկ էին չար խօսում,
բայց ոչինչ չկարացին հաստատել վերջը
հարցրեց քահանայապետը՝ “Դու ես
Յսուծոյ Որդին,,. Յիսուս պատասխա-
նեց. “Դու ասացիր, թէ ես եմ,,. և
յետոյ այս ևս ասաւ, թէ” կը տեսնեն նր-
րան նստած Աստուծոյ աջ կողմը,,. այս
խօսքի վերայ գոռացին ամենքը՝ թէ մա-
հապարտ է, ու սկսան նախատել և ծե-
ծել նրան:

§ 61. Պիղատոսի Հիւր:

Սուաւօտը տարան Յիսուսին Պիղատո-
սի մօտ, և սկսան չարախոսել. թէպէտ
Պիղատոս իմացաւ նորա անմեղութիւնը
և կամենում էր արձակել. բայց ժողովուր-

ղը գրգռուած քահանայապետներից և
կարդացողներից՝ աղաղակեց՝ “Խաչ հա-
նիր զրան, ապա թէ ոչ՝ սաքի կը կանգ-
նեցնէ ժողովրդին բոլոր Նըրէաստանի մէջ,
սկսած Գալիլիայից մինչև այս տեղ,,: Պի-
ղատոս լսելով թէ Յիսուս Գալիլիայի է
Նըրովդէսի իշխանութենից, ուղարկեց
նրան Նըրովդէսի մօտ. թէպէտ սա ուրա-
խացաւ նրան տեսնելով, բայց Յիսուս
լրել էր և ոչինչ չխօսեցաւ. այն ժամա-
նակ և Նըրովդէս անարգեց և յետ ու-
ղարկեց Պիղատոսի մօտ: Այս տեսնելով
թէ ոչինչ չէ կարողացել օգնել, այլ աւե-
լի խօսովութիւնն է ընկնում ժողովրդեան
մէջ, առաւ ջուր, լուաց ձեռները, ասե-
լով. “ այդ արդար մարդու արիւնից ես
աղատ եմ,,. և նոքա աղաղակեցին. “ Դո-
րա արիւնը մեր վերայ և մեր որդւոց վե-
րայ,,: Ապա Պիղատոս հրամայեց խաչել:

§ 62, Խաղելունիւն:

Այս ժամանակ Նրէայք պատեցին Յիւսուսի չորս կողմը, որը ապակումէին, որը մջքին ու գլխին էր խփում, որը հայդոյն էր. ապա տկլորացրին, և նորա շուրերը բաժանեցին իւրեանց մէջ, և նրան հազըրին կարմիր շոր, և փշէ պսակ դրին գլխին, ու տարան Գողգոթայ և խաչեցին, և երկու աւազակներ էլ աջ ու ձախ: Աջակողմեան աւազակը խոստվանեց իւր մեղքը և ստացաւ արքայութիւնը:

Յիսուս խաչի վերայ աղօթում էր խաչողներու վերայ, մսիթարում էր իւր մօրը, տալով իւր փոխանակ նրան որդի սիրելի աշակերտ Յովհաննէսը: Յիսուս ջուր ուղեց, և առեին քացախ ու լեզի: Օրուայ վեց (12) ժամից մութը բռնեց երկիրը մինչեւ ինն (3) ժամը. արեգակը խաւարեցաւ: Յիսուս տեսնելով թէ ամենայն բան կատարուած է, աղազակեց բարձր ձայ-

նով՝ “Նայր, քո ձեռքդ եմ աւանդում հոգիս,, , և աւանդեց. այդ ժամանակ շարժուեցաւ երկիրը, ճաքճաքուեցան քարերը, տաճարի վարագոյրը մէջ տեղը պատռուեցաւ, գերեզմաններ բացուեցան, և շատ սուրբերու մարմիններ յարութիւն առան, ու մատան սուրբ քաղաքը և շատերուն երեւեցին: Իայց զինուորներից մէկը Գեղարդով ծակեց կողքը, և շուտով գուրս եկաւ արիւն և ջուր նորա կենդանութեան նշան:

§ 63, Ուաղեհ:

Յովսէփ Արեմաթացի այր սլարկեցտ և նախարար, որ Յիսուսի ծածուկ աշակերտըն էր, Պիղատոսի թոյլատրութեամբ իջեցրեց Յիսուսի մարմինը խաչեց, ու պատեց մաքուր կտաւով և դրաւ քարէ գերեզմանի մէջ: Նրէայք՝ որ լսել էին Յիսուսից յարութիւնը, շատ վախեցան, և

կասկածելով թէ չլինի՞ որ աշակերտները
գողանան մարմինը, և ասեն թէ յարու-
թիւն առաւ, ինդրեցին Պիղատոսից զին-
ւորներ գերեզմանին զգուշանալու համար
և կնքեցին գերեզմանաքարը:

§ 64. Յարութիւն:

Երբորդ օրը Յիսուս յարութիւն ա-
ռաւ գերեզմանից. պահապանները վախե-
նալով հրեշտակներու երևալուց՝ ընկան
գետնի վերայ ինչպէս մեռածներ: Եւ շա-
բաթ երեկոյին մի քանի բարեպաշտ կա-
նայք եկան գերեզմանը, որ իւղով և խըն-
կով օժեն Քրիստոսի մարմինը, բայց զը-
ամն դատարկ, և հրեշտակը աւետիս ար-
ռաւ, թէ այս տեղ չէ, յարեաւ, , : Կո-
քա պատմեցին Առաքեալներուն, և ինքն
յարուցեալն Յիսուս երևեցաւ առանումէ
աշակերտներուն Պալեիայի սարի վերայ,
ու պատուիրեց գնալ և քարոզել հեթա-

նոսներուն, մղոտել նրանցը յանուն ձօր,
և Որդւոյ և Հոգւոյն Արբոյ, խոստանա-
լով նոցա լինիլ նրանց հետ մինչեւ աշխար-
հի վերջը:

§ 65. Համբարձուծը:

Յարութիւն քառասուն օրից յետոյ
Յիսուս ժողովեց աշակերտներուն Շեթա-
նիսի մօտ Զիթենեաց սարի վերայ, օրհ-
նեց նրանցը և խոստացաւ ուղարկել Հո-
գին սուրբ, որ ուսուցանէ և յիշեցնէ այն
ամենայն բաները, ինչ որ ինքը խօսել էր
նոցա հետ. և ապա համբարձաւ երկինքը,
ու նստաւ ձօր Աստուծոյ աջ կողմը:

§ 66. Համբարձուծը Հալուառութը և Քրի- ստոնէնեան պարագանեան Երանակնեած:

Քրիստոսի խոստմունքը կատարուեցաւ
Հոգւոյն Արբոյ իջնելով վերնատան մէջ

Վռաքեալներու և միւս միաբան հաւաստացեալներու վերայ, որք էին 120 հոգի։ Առքա ամենքը լցուեցան շնորհքով զանազան լեզուներ խօսելու և հրաշքներ գործելու։ Առքա էին քրիստոնէութեան առաջին տարածողները։ Քրիստոսի Եկեղեցին նախապէս հիմնեցաւ Երուսալէմում, ապա Նորէաստանի քաղաքներում և գեղերում, և յետոյ հեթանոսներու աշխարհներում։ Պետրոս առաջին քարոզութեամբ Նոդեգալստեան օրը դարձրեց դէպի ի Քրիստոս 3000 հոգի, և յետոյ Յովհաննէսի հետ բժշկելով մօրից ծնած կաղը՝ միւս քարոզութեամբ դարձրեց 5000 հոգի։

§ 67. Եւկեղեցն Պաղէստինայութ և Սէրբայութ։

Ուռի Ստեփանոսի նահատակութենից յետոյ անհաւատ Նորէայքը հալածանք

վերկացրին Վռաքեալներու և միւս հաւաստացեալներու վերայ Երուսաղէմում։ այն ժամանակ հաւաստացեալներուց շատերը ցըուեցան Նորէաստանի և Արքիայի կողմերը, որոց տարածեցին քրիստոնէութիւնը։ Փիլիպպոս սարկաւագ մկրտեց Սամարացիքը, իսկ Երուսաղէմայ Եկեղեցին ուղարկեց այն տեղ Պետրոսին և Յովհաննէսին, որք ազօթք անելով և ձեռք դնելով նոցա վերայ՝ ստացան Նոդեցին Արքոյ շնորհքը։ Կոյնապէս և ուրիշները հաստատեցին Եկեղեցի Դամասկոսում։

§ 68. Պողոսի դարձը։

Դամասկոսի Եկեղեցին բազմացաւ Պօղոսի դարձով։ նա էր երիտասարդ Փարիսեցի, սաստիկ պաշտպան Մովսէսական օրէնքներին, և հալածող Քրիստոսի եկեղեցուն։ Գնալով Դամասկոս քաղաքը քրիստոնէութիւնը ջնջելու համար, յան-

կարծ ճանապարհին փայլատակեց երկնքից
նորա վերայ այնպիսի անսովոր լոյս, որ ըն-
կաւ գետնի վերայ ու կուրացաւ, և լսեց
ահաւոր ձայն “Անուղղ, Անուղղ, ըն-
ուղ ես հալածում զիս,,. և կրկին լսեց
ձայն “Ես եմ Յիսուս, որ դու հալա-
ծումես,,. Յետոյ Տիրոջ հրամանով կանգ-
նեցաւ, ու նորա հետ եղած մարդիքը տա-
րան նրան Գամասկոս, ուր մկրտուելով
Ընանիա առաքեալից (37թ)` բացուե-
ցան աչքերը: Կառնալով այսպիսի հը-
րաշքով քրիստոնեայ, եղե յոյժ եռան-
դոս քարոզել Աւետարանի, մանաւանդ
հեթանոսներու մէջ :

§ 69. Եկեղեցին կետարքայութ:

Պետրոս առաքեալ լինելով Յոպպէ
քաղաքում, առանձին ալօթելու ժամա-
նակ եղե նրան աստուածային յայտնու-
թիւն հեթանոսները կանչելու համար

դեպ ի քրիստոնէական հաւատով՝ երկնքից
կախուած կտաւէ զամբիւղի օրինակով,
որ լիքն էր զանազան գազաններով, անա-
սուններով և թոշուններով, և երկնա-
յին ձայնը հրամայեց Պետրոսին մորթել
և ուտել:

Նազիւ թէ աւերտուեցաւ տեսիլքը,
երբ Առաքեալը տեսաւ իւր մօտ երեք
մարդիք ուղարկուած Նորմայեցի հարիւ-
րապետ Կուռնելիոսից, որ էր աստուածա-
վախ և բարեգործ մարդ, որ նա հրեշտա-
կի խօսքով խնդրեց Պետրոսից գալ Կե-
սարիա, որպէս զի լսէ նորամէն հոդու փըր-
կութեան բան: Նոզին Առբբ հրամայեց
նրան գնալ աներկիւղ, և երբոր Պետրոս
սկսաւ քարոզել Կուռնելիոսին և նորա
հետ եղածներուն Վրիստոսի տնօրէնու-
թիւնքը և փրկութիւն հաւատով Յի-
սուս Վրիստոսի վերայ, ամենքն էլ լցուե-
ցան Նոզւով Արբով, և ապա մկրտեց:

§ 70. Եկեղեցին Անտիռում:

Երուսաղէմի Եկեղեցին լսեց, թէ Ատեփանոսի նահատակութենից յետոյ ոմանք հաւատացեալներ հալածանքից զրուած հիմնել են եկեղեցի և Անտիռում, ուստի ուղարկեց Ռառնաբասին, որ աւելցրեց այն տեղ հաւատացեալներու թիւը, և յետոյ Պօղոսի հետ ի միաւին մէկ տարի աշխատեցին կարգաւորել այս եկեղեցին (39թ), և Անտիռում ամենքից առաջընկալան +ըստոնեայ անունը:

§ 71. Պօղոս առաւելալի հաստատած Եկեղեցւ:

Անտիռում եկեղեցին հաստատելուց և բարեկարգելուց յետոյ՝ Պօղոս սկսուերէք Ճանապարհորդութիւն անել քրիստոնէութիւնը տարածելու համար: Առաջին Ճանապարհորդութիւնը արաւ Ռառ-

նաբասի հետ (45 և 46 թ). և հաստատեցին եկեղեցիք Կիոլոսի և փոքր Ասիայի նահանգների մէջ: Երկրորդ Ճանապարհորդութեան ժամանակ՝ բաժանուեցաւ նորամէն Բառնաբաս, և Պօղոս նախայցելութիւն անելով էւր հիմնած եկեղեցեաց, կրկնին հիմնեց եկեղեցիք Մակեդոնիայում և Յունաստանում: Երրորդ Ճանապարհորդութեան ժամանակ՝ քարոզելով Եփեսոսում երկու տարի աւելի, տարածեց Վեւետարանը Ասիայի բգեշխութեան մէջ, և յետոյ այցելութիւն անելով եկեղեցեաց՝ գնաց Երուսաղէմ (66 կամ 68 թ.), և հազեւ թէ աղատուեցաւ անհաւատ կրէից սպանուելուց: Առոմայեցւոց հաղարապետը աղատելով նրան մահից՝ ուղարկեց որպէս Առոմայ քաղաքի Կիսարիա Փելիքս դատաւորի մօտ: Այս տեղ երկու տարի շղթաներով կապած մնաց բանտի մէջ, և յետոյ Փելիքսին յաջորդ Փեստոս դատաւորի առջև

Ազրիպպա թագաւորին ներկայութեան,
բողոքեց առ կայսր: Այս պատճառաւ ու-
ղարկեցին նրան պահապաններով չոռոմ;
ուր դժաւ շատ քրիստոնեայք, և երկու
տարի քարոզում էր տան մէջ, և կայսեր
տանից մի քանիսին դարձրեց: Պօղոս կոչ-
ում է Առածեալ հեթանոսաց:

§ 72, Միւս առածելը հիման Խէղեցիւը:

Միւս Առաքեալք և եօթանասուն ա-
շափերտները ճանապարհորդութիւն արին
զանազան կողմեր քարոզելու Աւետարանը:
Պետրոս քարոզեց Ճրէաստանի, Գաղա-
տիայի, Պոնտոսի, Փռիւգիայի, Կապաղով-
կիայի, Պարսկաստանի և Ասորեստանի
կողմերում: Թաղէս հիմնեց եկեղեցիք
Երգեսիայում և Հայաստանում: Մար-
կոս՝ Աղէքսանդրիայում: Թառմաս քարո-
զեց Պարթևաց, Մարտաց, Պարսից և
Հնդկաստանում: Անդրէս՝ ՈՂիւթա-

յւոց: Բարդուղիմէոս՝ Հայաստանում:
Մարիամ Մագդաղինացի՝ Հռոմում:
Այսպէս և միւսները տարածեցին ամենայն
տեղ քրիստոնէութիւնը, հաստատելով
իրանց քարոզութիւնքը արիւնով և չար-
չորակով:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՅՈՅՑ.

§ 73, Վահանայաղետունիւն Խէղեցիւը:

Խէղեցու քահանայապետունիւնը Ա-
ռաքեալներու ժամանակ բաժանւում էր
երեք աստիճան, Եղիսակողոսունիւն, Պահա-
նայունիւն և Սարկառագունիւն:

Խպիսկոպոսի իշխանութիւնն էր, ինչ-
պէս է և այժմ, ձեռնադրել և կարգել
քահանայք և սարկառագներ, խրատել,
խրախուսել և գատել և իշխանութիւն
իւր վիճակը կառավարելու:

Վրահանայի պաշտօնն էր, ինչ որ այժմը է, քարոզել ժողովրդեան և կատարել սուրբ խորհուրդները:

Ուրկաւագի պաշտօնն էր, առաջ հոգալ աղքատներու պիտոյքը, և յետոյ ծառայել սուրբ խորհուրդը կատարելու ժամանակ:

§ 74. Առ-ը Ե՞րկու-ը դնել:

Մշտու-նեան էր առաջին ձանապարհը մտնելու Վրիստոսի եկեղեցու մէջ. Առաքելական դարում նախ ուսուցանում էին հաւատը միքառութիւն խնդրողին, և կատարւում էր երեք անգամ ընկղմելով երեխայն ջրի մէջ, տալով ամենասուրբ Երբորդութեան անունը, և հագնեւմ էր ապահակ հանդեւ ճաժիր-նեան նշան:

Դրանք խորհուրդը տալիս էին Առաքեալք նոյն ժամին միլտութենից յետոյ, և կատարւում էր ձեռք դնելով: Իսյց որովհեակ եկեղեցին տարածուելով ամեն

տեղ, դժուար էր Առաքեալներուն դաշնուիլ ամեն տեղ, ուստի սահմանեցին մեռոնը, զոր օրհնեցին Առաքեալք և ուղարկեցին ամենայն տեղ, ինչպէս զբում է Գիոնեսիոս Արիսպագին, որ նորամուլ կատարուի դրոշմի խորհուրդը:

Հաղոցու-նեան: Եյս խորհուրդը կատարւում էր 1, սուրբ Գևորքը կարգալով 2, հոգեոր երգերով, 3, քարոզութիւնով, 4, աղօթքով, 5, հաց և գինին, որ բերում էին ժողովուրդը սրբագործելու համար, 6, նուերքի սրբագործելը էական բանով, 7, նորա բաժանելը ներկայ դաշնուղներուն, և 8, սորանից յետոյ լինում էր սեղան, որ կոչում էր աժառ, այսինքն սէրոյ հաց:

Աղաղիար-նեան խորհուրդը կատարւում էր հրապարակական խոստովանութեամբ: Նորա արտաքին նշաններն էին՝ ծնրադրութիւն, գետնի վերայ փոռւիլ, արտասուք, պահք, աղօթք:

Պատմէ համար պահանջւում էր փեսալի և հարսի փոխադարձ համաձայնութիւնը, և ապա եկեղեցու ներկայութեանը օրհնում էր նոյցա պսակը եպիսկոպոսը կամ քահանայն:

Քահանայութեան կոչման համար շատ սաստիկ էին քննում քահանայացուի հաւատը, զիտութիւնը և վարքը. Նրան ընտրում էր ժողովուրդը, և առաքեաները կամ եպիսկոպոսները պահքով և ազօթքով և ձեռք դնելով կատարում էին կարգը. յետոյ մտաւ մեռնի զործածութիւնը, զոր առաքեալները սահմանեցին, ինչպէս դրում է Դիբոնէսիոս Արիսպագին:

Աւելին օծումը կատարում էր երեմնի իւղով, երբեմն ազօթքով, երբեմն միասին իւղով ու ազօթքով հիւանդի վերայ:

§ 75. Եպոնածողալութեան:

Հասարակաց Աստուածպաշտութիւնը սկսվում էր Տէրունական ազօթքով, կար-

դում էին հին ու նոր Կտակարանից մի քանի պլուխներ, և յետոյ եպիսկոպոսը կամ քահանայն մեկնում էր ժողովրդին կարդացածը. լինում էր երգեր, և վերջանում էր Հաղորդութեան խորհրդի կատարելով:

Աստուածպաշտութեան տեղերն էին, 1, Երուսաղէմայ տաճարը, 2, Վերնատաննը՝ ուր Հոգին Սուրբ իջաւ, 3, առանձին տներ պատրաստուած յատկապէս սորա համար:

§ 76. Պահեածութեան:

Առաքելական Եկեղեցին միշտ պահում էր քառասնորդական պահքը Զատկից առաջ, նոյնպէս Չորեքշաբաթի և Ուրբաթ, ինչպէս երեւում է առաքելական կանոններից, որի վերայ խօսում են հաստատութեամբ 2 և 3 դարու սուրբ Հայրերը: Ի՞աց ի սահմաննեալ պահքից առա-

ջին քրիստոնեայք պահում էին երբոր
երեւելի գործ պիտի սկսէին, ինչպէս ձեռ-
նադրութեան խորհուրդը կատարելուց
առաջ, և լ:


§ 77. Տօնակատարութեան:

Առաքելական եկեղեցին ունէր տօներ,
1, Քրիստոնի յարս-նետան օրը, այն է Ափ-
րակէն, որ բռնեց Արէից շաբաթ աւուր
տեղը, 2, Նոր ու-խորի Օտարէիլ, Քրիստոսի
շարչարանքի և յարութեան միշտակ,
3, Հոգեգալուստը, 4, Կօննդեան և մկր-
տութեան տօնը, և 5, բաց ի սորանցից՝
տօնում էր հանդիսով և մարտիրոսներու
վախճանուելու օրերը:

§ 78. Խռարս-ի ձեռը:

Արէայք և հեթանոսները ունէին իւր-
եանց թաղումի առանձին ծէսեր, և միա-

տեսակ կատարելու համար առաջին Ակե-
զեցին սահմանեց կատարել հանդիսաւոր
կարգադրով և պատարագով: Մեռելը
լեզացնում էին ջրով, պատանում էին ըս-
պիտակ կտաւով, երեսը դարձնում էին
դէպ ի արեւելք, թաղում էին մարտիրոս-
ներու գերեզմանների մօտ: «Անջեցիալի
հանգստեան պաշտօնը սկսվում էր արեկի
մայր մտնելուց յետոյ և շարունակւում էր
ողջ գիշերը երգերով, ընթերցուածնե-
րով և աղօթքով, և վերջանում էր պա-
տարագով, և հացկերութով: Միւս օրը
կանայք գնում էին գերեզմանը, զոր կո-
չում ենք այդ: Արէական եօթն օր սզի
փոխանակ սահմանեցաւ եօթն օր պատա-
րագ. նոյնպէս երեսուն օր տրտմութեան
և հեթանոսներու, որպէս Խղիպտացւոց,
եօթանասուն աւուր Հայութական սահ-
մանեցաւ քառական Հայութական ամա-
րիձներով, և առքիւթք/որ աչքից հոգիք-
լիզում կոչվում է «ՊՈՅԻ ՀԵԿԱՆԻ ԱՎԱՐԱ».



1498

1498

«Ազգային գրադարան



NL0028360



1456